

502

ԲԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՑԵԱՆԻ, Է 67

լարներն արտապել արգելուած է

Կ Ա Ր Գ 1082

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Հ.0.Յ.Ա.Ս.Ա.Ն.Ե.Ս.38 Ա. ԵԿԵՂ.ԵՑԻՈՅ

Գ Ա Ա Ա Գ Խ Ի Բ Ք

Թեմական, ծխական, պետական և բաղաբային դպրոց-
ների համար



Կ ա զ մ հ ց

ԳիհՏ Ա.Պ.Ո.Ն.Ե.Ս.Ն.Յ Ա. Ք.

Եօրեռորդ ուղղած տպագրութիւն

35 ԿԱԿՈ.ՐՈՎ

Թ Ի Յ Յ Լ Ի Ս


Եղիբարտսար. օջ. Ա. Աղանինցի, Պոլից. 7.

1911

2(02)
Ա - 45

D. Goprepoli

03 AUG 2009



Նկարներն արտապել արգելուած ե

2(02)
Ա-45

Կ Ա Ր Գ

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Թ Ա Ա Դ Ի Բ Ք

Թեմական, ծխական, պետական և բաղաքային դպրոց-
երի համար



Ա Մ Ձ Մ Ե Ց

ԳԻՒՏ Ա.Դ.Ա.ՆԵՍ.ՆՑ Ա. Ք.

Եօթերադ ուղղած տպագրութիւն

35 ՆԿԱՐՈՎ

32921-6

Թ Ի Ց Լ Ի Ս
ԷԼԷՔՏՐԱՄԱՊԱՐԱՆ ՕՐ. Ն. Աղանեանցի, Պոլից. 7
1911

6 FEB 2013

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Կ

Տ. Տ. Պ Կ Բ Տ Ի Շ Ա.

Ի ՏԵՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ.

Վ Ե Խ Ա Փ Ա Ն Խ Ա Ր Ա Գ Բ Ա Վ Ա Ր Ո Ւ Ւ Կ Ա Խ

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ա Ց

Դ Ի Ւ Ա Ն

Վեհ. ԿԱՅՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

թ. 309

31 մարտի 1899 ամի

Տ Փ Խ Բ Ա

Քարձր Արժանապատիւ Տ. Դիւտ ա-
ւադ քահանայ Աղանեանց

Զմատուցեալսն ընդ յայտարարութեանդ
զգաստագիրքն կրօնագիտութեան որ ընդ ա-
նուամբս «Կարգ Աստուածաղատութեան Հա-
յաստանեայց» և Եկեղեցւոյ» և զպատկերմն
զարդուց, զգեստուց և անօթոց գործածելոց
ի մերս Եկեղեցւոյ, արժանի հաւանութեան
գտեալ ի կողմանէ Նորին Ս. Օծութեան վե-
հափառ Հայրապետի ազգիս, Նորին Սրբու-
թիւն բարեհաճեցաւ մակազրել ի վերայ յայ-
տարարութեան այսպէս «Թոյյատրեմք ի հրա-
տարակել», պատուիրելսվ նաև Դիւտին մա-
կագրել ըստ հրամանի իւրում ի վերայ մա-
տուցեալ պատկերաց զթոյլտութիւն հրա-
տարակութեան նորին, որ և Դիւտնա կատա-
րելով ընդ այսմ վերապարձուցանէ Ձեզ:

Դիւտապետ ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ա. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԻԹԻՒՆ

Ա. Ինչ է աստուածպատութիւնը

Աստուածպաշտութիւնը Աստծուն ծա-
ռայելն է. իսկ աստուածպաշտութեան կարգը
այն արարողութիւններն ու ծէսերն են, որոնք
հրապարակով կատարում են Եկեղեցում:

Մենք պարտաւոր ենք մեր հոգին և զգաց-
մունքները վեր ուղղել դէպի Աստուած և
պաշտել նրան բոլոր սրտով. պէտք է խոստովա-
նինք, որ նա է մեր տէրն ու ստեղծողը և մենք
ոչինչ ենք նրա առջև. պէտք է շնորհակալ լի-
նինք նրա տուած ողորմութիւնների համար,
պէտք է զղջանք մեր մեղքերը, խնդրենք նրա
զթութիւնն ու օրհնութիւնը և կատարենք նրա
պատուէրները:

Բ. Աստուածպատութեան սահմանուղը

Աստուածպաշտութեան գլխաւոր հիմնագիրը
Յիսուս Քրիստոսն է. նոյնը հապտատեցին ա-
ռաքեալները, ինչպէս ասում է Պօղոս առա-
քեալը. —

Կրթիր քո անձը աստուածպաշտութեան
մէջ, որովհետեւ մարմնի կրթութիւնը քիչ բանին

օգտակար է, իսկ աստուածպաշտութիւնը ամեն բանի համար օգտակար է և պարունակում է իւր մէջ թէ այս և թէ հանդերձեալ կեանքի աւետիսը:

Իսկ մեր եկեղեցու աստուածպաշտութեան կարգերի ու արարողութիւնների հիմքը դրին ս. Թագէոս և Բարդուղիմէոս առաքեաները, որոնք՝ նրա ապագայ կարգաւորութիւնը յանձնեցին իշրանց յաջորդ եպիսկոպոսներին:

Հայոց եկեղեցու աստուածպաշտութեան կարգերը ձոխացրեց և կարգի դրեց ս. Գրիգոր Լուսաւորիչը. նրանից յետոյ ս. Սահակ և Մեսրոպ թարգմանիչները, Գիւտ կաթողիկոսը և Յովհան Մանդակունի հայրապետը զարդարեցին զանազան երգերով, աղօթքներով և ընթերցուածներով:

¶. Աստուածպատուրեան տեսակները

Աստուածպաշտութիւնը երկու տեսակ է կատարւում. — մասնաւոր և հասարակական:

Մասնաւոր. Ցիսուս պատուիրում է մեզ. «մտիր քո սենեակը և ծածուկ աղօթիրածուրեմն ամեն մարդ պարտաւոր է պաշտել Աստծուն առանձին, բաց անելով իւր հոգին նրա առաջ, յայտնելով իւր կարիքները և աղօթելով ու կարդալով նրա խօսքը»:

Այս աղօթքը և պաշտամունքը, որ կատարւում է տնային կերպով, կոչւում է առանձնական կամ մասնաւոր աղօթք: Մասնաւոր է և

այն պաշտօնը, որ մարդ կատարում է իւր ընտանիքի հետ՝ գերդաստանի մէջ բարեպաշտութեան զգացմունքը վառ պահելու և Աստծու օրհնութիւնը ստանալու համար:

Հասարակական. բացի մասնաւոր աղօթքից, մենք միաբանութեամբ էլ պաշտօն ենք մատուցանում Աստծուն եկեղեցում՝ հասարակաց բարօրութեան և խաղաղութեան համար:

Այդպիսի աղօթքը, որ կատարւում է բոլոր հաւատացեալների ներկայութեամբ, գրա համար սահմանուած տեղերում, և յատուկ պաշտօնեաների ձեռքով, կոչւում է հասարակական աղօթք:

Միաբանական աստուածպաշտութիւնը մի գեղեցիկ միջոց է հաւատի մէջ առաջադիմելու և հաւատացեալների մէջ բարեպաշտութեան ու մարդասիրութեան զգացմունքը գորացնելու:

¶. Աստուածպատուրեան եղանակը

Աստուածպաշտութեան արտաքին նշանները սրանք են. խաչակնքել, չոքել, որ խոնարհութեան նշան է. ծնրադրութիւն, որ նշան է մեր ոչնչութեան Աստծու առջե, կարգալը, սաղմոսելը և բարձր ձայնով աղօթելը:

Բայց եթէ այս արտաքին արարողութիւնները կապուած չեն մեր ներքին հոգեկան պաշտօնի հետ, այն ժամանակ աստուածպաշտութիւնը ձշմարիտ չէ, այլ միայն մի ձեւական

բան։ Այս պատճառով էլ աստեւածպաշտութիւնը պէտք է կատարել խորին յարգանքով, ուշադրութեամբ, հեզութեամբ, մաքուր հոգով ու մարմնով և ջերմեռանդութեամբ։

Ե. Կոչնուկ եւ զանգակ

Հասարակաց աստուածպաշտութեան հրաւիրելու համար հին ժամանակ գործ էր դրւում կոշնակը։ Կոչնակը փայտէ կամերկաթէ տախտակաձեռործիք է։ Ամեն անգամ աստուածպաշտութեան սկզբին ժամհարը հաւատացեալների տների առջե կոչնակի վրայ ձողը խփելով՝ ժամ էր հրաւիրում նրանց։

Կոչնակը յիշեցնում էր հրեշտակապետի փողը, որով աշխարհիս վերջը բոլոր կենդանիներն ու մեռելները պէտք է կանչուին Աստծու դատաստանի առջե։

Վերջին ժամանակները կոչնակի փոխարէն սկսեցին զանգակ գործածել։

Ընդունուած է զանգակ հնշեցնել իւրաքանչիւր ժամերգութիւնից առաջ, պատարագից առաջ, անդաստանի, նախատօնակների, յուղարկաւորութեան ժամանակ և այլն։

Զ. Աստուածպատութեան լեզուն

Հայոց եկեղեցին հինգերորդ դարից սկսած աստուածպաշտութիւնը կատարում է հայերէն գրաբար լեզուով, որով գրուած են մեր եկեղե-

ցական բոլոր գրքերը, և թոյլատրուած չէ աշխարհաբար լեզուով կատարել։

Է. Ճասարակաց աստուածպատութիւնը հետեւեալ հոգեսոր գրուածներից է բաղկանում։

Ա. Ս. Գիրը, կամ աստուածաշունչ մատեան, որ երկու մասից է բաղկացած—Հին կտակարան և Նոր կտակարան։

Հին կտակարանից եկեղեցում կարդացւում են նշանաւոր գէպերը, այն է՝ Մովսէսի, Յովքի, Սողոմոնի, մարգարէների, Յեսուի, Թագաւորների և Մակաբեյցիների գրքերից հատուածներ և Սաղմոսը ամբողջ։

Իսկ Նոր կտակարանից կարդացւում են՝ ամբողջ չորս աւետարանը, Գործք առաքելոցը և Առաքեալների թղթերը։

Բ. Տողեւոր երգեր կամ շարականներ, որոնք բաժանւում են ութ ձայների—առաջին ձայն, առաջին կողմ, երկրորդ ձայն, աւագ կողմ, երրորդ ձայն, վառ, չորրորդ ձայն, վերջ։ Բացի այս ութ ձայներից՝ կան նաև ծանր երգուող շարականներ, որոնք կոչւում են ստեղի և այլեայլ հոգեսոր երգեր առանձին եղանակներով։

Գ. Աղօթքներ,

Ե. Կրօնական դաստիարակովմիւն, որ լինում է բարողութեան միջոցով։

Բ. ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Աստուածալաշտութեան ժամանակ կատարւում են հետեւեալ գործողութիւնները.

Ա. Խաչակնչել անձը, խաչակնչելով յիշում ենք մեր Փրկչի մահը խաչի վրայ մարդկային պղի փրկութեան համար:

Բ. Երկրպագութիւն եւ զլուկա խոնարհեցնելը, որով ցոյց ենք տալիս մեր ծառայութիւնը և հեղութիւնը Աստծու առջեւ և խոստովանւում ենք մեր մեղաւոր լինելը: Երկրպագելը նշան է նոյնպէս, որ մենք մասնակցում ենք աստուածալաշտական աղօթքներին և խնդրուածքներին:

Գ. Ծննդաղրութիւն. ծունք գնելով ցոյց ենք տալիս մեր խոնարհութիւնը Աստծու առաջ և հնագանդութիւն նրա կամքին:

Դ. Խնկարկել. մարդիկ խունկ ծխելովնպատակ ունեն իրանց յարդանքներն ու նուէրները մատուցանել Աստծուն, քանի որ անձամբ մօտենալ չեն կարող նրան:

Մեր մէջ խնկարկութիւնը երկու նշանակութիւն ունի. մէկը՝ աստուածալաշտութեան և մեր ջերմեռանդ աղօթքի նշան է, ինչպէս առւմ է Դաւիթ մարդարէն. «Ուղիղ լինի իմ աղօթքը, ինչպէս խոնկը քո առաջ, տէր». և միւսը՝ ժողովրդի օրհնութեան: Եկեղեցուն և ժողովրդին խնկարկելով ցանկանում ենք, որ Աստծու օրհնութիւն իջնի դրանց վրայ և իւրաքանչիւրի

աղօթքը խնկան ծխի նման բարձրանայ դէպի
Աստուած:

Խնկարկում են աստուածալաշտութեան հետեւեալ միջոցներին.—

«Տէր զի բազում» ասելիս,

Աւետարան կարդալիս,

«Օրհնութիւն» շարականի սկզբին,

«Հոգեգալստեան» շարականին,

«Փառք ի բարձունս» երգելիս,

«Լոյս զուարթի» երկրորդ մասը երգելիս,

«Ա. Աստուած» երգելիս,

Պատարագին՝ սպասը դնելիս, վերաբերումի և գլխաւոր երգերի ու աղօթքների ժամանակ, Անգաստանի տեառնագրելու ժամանակ, և «Կեցո» տալիս:

Ե. Խաչով, աւետարանով և սուրբերի մասունքներով օրհնելով, որ Տիրոջ օրհնութեան նշան է:

Զ. Թաւիօր և անդաստան, երբ տեառնագրում են աշխարհի չորս կողմերը. այդ կատարւում է տէրունական հանդիսաւոր տօներին, երաշտի, և մահտարաժամի ժամանակ:

Է. Նախատօնակ. հայոց հաշուով օրը հաշւում է երեկոյից մինչև միւս երեկոյ, այդ պատճառով մեր եկեղեցին, տէրունական և նշանաւոր օրբերի տօնախմբութեան նախընթաց երեկոյին, առանձին տօն է կատարում և այդ

ժամանակ երգում են միւս օրուայ շարական-ների մի մասը. դա կոչւում է նախատօնակ:

Ը. Հակովին. Տէրունական մեծ տօների նախընթաց գիշերը կատարւում է միւս օրուայ ժամերգութեան մի մասը, որ կոչւում է հսկումն, այսինքն արթնութիւն:

Դ. ԱՍՏՈՒՄԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԲ—ԵԿԵՂԵՑԻ

Աստուածպաշտութեան գլխաւոր տեղը տաճարն է կամ եկեղեցին, որ օրհնւում է և ու մեռնով օծւում եպիսկոպոսի ձեռքով:

Եկեղեցում կատարւում են սուրբ խորհուրդներն ու սրբագործութիւնները, իսկ աստուածպաշտութեան մի քանի մասերն ու խորհուրդները կարեոր գէպքերում, կարելի է կատարել նաև եկեղեցուց դուրս:

Եկեղեցին կամ տաճարը հաւատացեալների ժողովն է, որոնք միաւորուած են մի հաւատով և գտնւում են մէկ հոգեսոր հովուապետի հովանաւորութեան տակ:

Քրիստոնէական եկեղեցիները, աշխարհագրական և ազգագրական կողմից, երկու գլխաւոր մասի են բաժանւում.—Արեւելեան եւ Արեւմտեան:

Ա. Արեւելեան կոչւում է այն եկեղեցին, որ Քրիստոս հիմնեց Երուսաղէմի մէջ, որտեղից նրա առաքեալներն ու աշակերտները տարածե-

ցին Հայաստան, Փոքր և Մեծ Ասիա, Յունաստան, Եգիպտոս և բոլոր Արևելեան կողմերը: Արևելեան եկեղեցու գլխաւոր ներկայացուցիչներն են Հայ և Յոյն մեծ եկեղեցիները, որոնք ունին միենոյն Աստուածային գլուխը՝ Քրիստոս. բայց երկուսն էլ կատարելապէս տարբերում են մեմեանցից ազգով, լեզուով և ծէսերով:

Բ. Արեւմտեան եկեղեցին այն է, որ Հռոմի մէջ հիմնուելով՝ հետզհետէ տարածուեց Եւրոպա, Աֆրիկա և յետոյ Ամերիկա: Ուստի և Արևմտեան եկեղեցին կոչւում է նոյնպէս Հռոմէական, լատինական կամ պատական եկեղեցի և նրա գլուխն է Հռոմի եպիսկոպոսը կամ պապը:

Տաճարի ձեռք

Հայկական եկեղեցին կամ տաճարը շինւում է երկար ու քառանկիւնի ձեռք, մեծ մասամբ խաչաձև: Եկեղեցին ուղղուած է արևմուտքից դէպի արևելք, որովհետեւ արևելքից ենք սպասում արևի ծագման, այսինքն՝ Քրիստոսի երկրորդ անգամ գալուն:

Եկեղեցու գլխին հաստատուած է գմբէթը, որի ծայրին ամրացրած է Քրիստոսի խաչը, ինչպէս յաղթութեան դրօշակ հեթանոսութեան դէմ:

Եկեղեցին օծուելիս նուիրւում է ի պատիւ Տէրունական որ և իցէ տօնի կամոր և է սուրբի անուան:

1
Եկեղեցու մասերը

Տաճարը բաժանւում է երեք մասի.

ա. Գալիթ, բ. իսկական տաճար կամ ատեան և գ. զեր կամ ամբիոն:

Ա. Գալիթը առանձին շինութիւն է բուն եկեղեցու արեմտեան պատին կից, որ հին ժամանակներում մեր բոլոր եկեղեցիքն ունէին տաճարից որոշ։ Պատարագի ժամանակ, երբ սարկաւագը երգում էր «Մի ոք յերեխայոց» երգը, ներելի մեղքի տէր ապաշխարողները եկեղեցուց դուրս գալով՝ այդտեղ էին աղօթում։

Միւս երկու մասերը, այն է՝ Ատեանը և Բեմը, բուն եկեղեցու մէջն են։

Բ. Ատեանը ունի կանանց և տղամարդկանց բաժանմունքներ։

Առջեկի մասը յատկացրած է տղամարդկանց, իսկ ետևի մասը՝ կանանց. Երկու մասերը բաժանուած են միմեանցից պատնէշով. կանանց մասը երբեմն երկյարկ է լինում, որի վերին յարկը կոչւում է վերնատուն։

Ատենի առջեկի այն մասը, որ կից է բեմին և դաս էլ է կոչւում, սովորաբար եկեղեցու յատկից մի քանի մատ բարձր է. և աջ ու ձախ կողմերից վանդակապատ։ Դա բացառապէս յատկացրած է աստուածպաշտութեան. այնտեղ կանգնում են հոգևորականներն ու կատարում են ժամերգութիւնը՝ դասէդաս, իսկ հանդիսաւոր

տօներին, նախատօնակներին և անդաստանի ժամանակ՝ ժամերգութիւնը ասւում է մէջ տեղը։

Սեղանի աջ կողմի դասը կոչւում է աջակողմեան կամ վերին դաս, ուր դրուած է լինում Հայրապետի գահը կամ առաջնորդի աթոռը և ուր կանգնում է աւագ կամ աւագագոյն քահանան. Իսկ միւս դասը կոչւում է ծախակողմեան դաս։

Եկեղեցու այդ մասում, աջակողմեան դասի հիւսիսային պատի մէջ շինուած է մկրտութեան քարէ աւազանը հաւատացեալներին մկրտելու համար. աւազանը օրհնում և ս. մեռնով օծում է եպիսկոպոսը։

Եկեղեցին լինելով ամեն հաւատացեալների մայրը՝ աւազանը օրինակ է արգանդի, որտեղից ծնուռմ են մարդիկ դէպի յաւիտենական կեանքը։

Գ. զեմը կամ ամբիոնը եօթն աստիճաններով բարձրացրած է լինում դասի առջնից, տաճարի արեմելեան կողմը. Նրա վրայ կատարում է պատարագի արարողութիւնը և սրբազնագործ հոգևորականների ձեռնադրութիւնը, այնտեղ են կարդում իւղաբերից Աւետարանը և քարոզ խօսում ժողովրդին։

Բեմը բարձրանալ իրաւունք ունին միայն աստիճան ունեցող հոգևորականներ։

Բեմի վրայ են՝

Սեղանը, որ ամրացրած է դէպի արեմելք

վէմ քարի վրայ. նրա վրայ է մատուցւում և պատարագը. նրան մերձենում են միայն սրբագնագործ պաշտօնեաները: Սեղանը պէտք է լինի անշուշտ քարից և հաստատուն և պէտք է օծուած լինի և. մեռնով:

Սեղանը Գողգոթա սարի խորհուրդն ունի, ուր խաչուեց Քրիստոս և այն այրի, որի մէջ նա թաղուեց:

Սեղանի վրայ դրւում է խաչ, աւետարան, տէրունական պատկեր, մասնատուփ և մեռն:

Բեմի վրայ շինուած է վարագոյր, որով ծածկում են սեղանը՝

Պատարագի սպասը գնելիս,
«Տէր ողորմեա» երգելիս,
Երեք տիեզերական ժողովների տօներին՝
Երբ որ երգում են «Ով հրաշալի» շարականը,
Գոնաբացէքի կարգը կատարելիս (եթէ եկեղեցին գաւիթ չունի):

Քառասնօրեայ պահքի օրերին,
Ճրագալուցի երեկոներին, և Աւագ հինգշաբթի՝ ապաշխարողների կարգը կատարելիս՝
մինչև պատարագի սկիզբը:

Սեղանի ուղղութեամբ տարածւում է խաչկալը, որ փայտէ կամ քարէ շինուածք է, գլխին ամրացրած խաչ պրից և ստացել է իւր անունը՝ խաչկալ:

Սեղանի աջ և ձախ կողմերում, խաչկալի

տակը, խորսնների երկու դռներն են. նրանց վըրայ Հայոց եկեղեցում նկարուած են Հայաստանի նախկին լուսաւորիչներ և. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալների պատկերները. այդտեղից պատարագի ժամանակ վերաբերում են աւետարանը ու պատարագի ընծաները:

Ընծայտրան կամ խորհրդանոց: Սեղանի ներսը, հիւսիսային պատի մէջ, հանուած է մի փոս, ուր պատրաստում են և. խորհրդի ընծաները կամ սպասը, այսինքն՝ հացն ու զինին, որ այնտեղից պատարագի ժամանակ սարկաւուգը վերաբերում է պատարագիչ քահանային: Ընծայաբանը յիշեցնում է հին ուխտի առաջաւորութեան սեղանը և այն այրը, ուր ծնաւ Քրիստոս:

Սարկաւագատուն, սրբատուն, աւանդատուն կամ խորան:

Եկեղեցուն կից կամ առանձին շինութիւն է, իով երբեմն էլ եկեղեցու տակը ներքնայարկ, ուր պահուում են եկեղեցու անօթներն ու զգեստները և սրբոց նշխարները:

Այժմ գրան փոխարինում են երկու խորանները, որոնք շինուած են լինում բեմի աջ ու ձախ կողմերը, դասերի հանդէպ: Խորանում զգեստաւորւում են եկեղեցու բոլոր պաշտօնեաները աստուածական կարգը կատարելու համար:



Եկեղեցու հիմնարկելքը և օծումը

Եկեղեցու հիմքը և նոյն իսկ եկեղեցին օժում է եպիսկոպոսը մեծ հանդիսով, Հայաստանեայց եկեղեցու մայր մաշտոցի կարգաւորութեան համաձայն:

Հիմնարկելք. Նախ՝ եպիսկոպոսը վերցնում է ճարտարապետական լարը և գծում է գետնի վրայ եկեղեցու շինութեան ձևը. այնուհետև վերցնում է բըիչը և մի երես փորում սահմանած տեղը, որ յետոյ շարունակում է փորել ժողովուրդը:

Հիմնարկեքի այս ձևը վերցրած է ս. Գրիգոր Լուսաւորչից, որ ինքն իր ձեռքով գծեց Էջմիածնի մայր տաճարի և Հոփիսիմեան ու Գայիանեան կոյսերի վկայարանների տեղը:

Յետոյ եպիսկոպոսը, բոլոր հոգեսորականների հետ զգեստաւորուելով, ժողովրդի ներկայութեամբ, գցում է եկեղեցու հիմքը. — օծում է 16 քար, որոնցից տասներեքը առաքեալների անունով, երկուսը Մարկոս և Ղուկաս աւետարանիչների և մէկը՝ ս. Լուսաւորչի անունով. և այդ քարերը գնում է հիմքի մէջ իւրաքանչիւքի համար յատկացրած տեղը:

Օծման նաւակատիք. Հին ուխտի ժամանակ, երբ Սողոմոն թագաւորն աւարտեց Երուսաղէմի տաճարի՝ շինութիւնը՝ նաւակատիք ա-


րեց ողջակեզներով, այսինքն՝ եկեղեցու շինութեան տօն կատարեց:

Այսպէս էլ, երբ մեր եկեղեցու շինութիւնը աւարտում է, օծման նախընթաց երեկոյին եպիսկոպոսը, մեռոնակիր քահանան և հոգեորականները զգեստաւորուած, ժողովրդի բազմութեան հետ, ս. մեռոնը եկեղեցական հանդիսով տանում են նոր շինուած եկեղեցին. այնտեղ կադարում են նախատօնակ, երգելով այն տօնի շարականները, որի անուան նուիրում է եկեղեցին. ասում են երեկոյեան ժամերգութիւնը. յետոյ լինում է հսկումն և կատարում են գիշերային և առաւօտեան ժամերգութիւնն ամբողջապէս: Այս կարգը կոչւում է եկեղեցու օծման նաւակատիք:

Օծումը. միւս առաւօտ եպիսկոպոսը և բոլոր հոգեորական դասը ժողովրդի հետ հաւաքուելով եկեղեցու արևմտեան դռան մօտ, որ այդ միջոցին փակուած է լինում, կատարում են դռնաբացէքի կարգը: Յետոյ քարէ սեղանն ու եօթը գոգնոցները ձեռներին մտնելով եկեղեցին, կատարում են սահմանած կարգը եկեղեցու մէջտեղը, դէպի հարաւ, դէպի հիւսիս և բեմի վրայ, որից յետոյ եպիսկոպոսը սեղանը հաստատում է սիւնի վրայ:

Դրանից յետոյ սարկաւագները ջրով ու գինով լուանում են սեղանը ի խորհուրդ Քրիստոսի կողքից բղիսած աղեան և ջրի, որով սըր-

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՏԱԿԱԳԻՒԹՅՈՒՆ



- | | |
|---------------------------------|---|
| 1. Սեղան. | 31. Գրիգոր Լուսաւորիչ. |
| 2. Բեմ. | 32. Բարդուղիմէոս. |
| 3. Ատեան. | 33. Սիմօն կանանցի. |
| 4. Աւազան. | 34. Մատաթիա. |
| 5. Դուռն պահարանի զգեստաւորման. | 35. Թագէոս. |
| 6. Դուռն պահարանի զգեստոց. | 36. Յակոբոս Ալփեան. |
| 7. Բուռվառոց. | 37. Թօմա. |
| 8. 9. 10 11. սիւներ. | 38. Յակոբոս Ղեքեոս. |
| | 39. Պօղոս. |
| | 40. Այս չորս սիւների վրայ կառուցւումէ կաթուղիկէն. |
| 12.—23. կամարներ. | 41. Աջ դուռն. |
| 24. Մատթէոս. | 42. Չախ դուռն. |
| 25. Մարկոս. | 43. Հիւսիս. դուռն. |
| 26. Ղուկաս. | 44. Հարաւ. դուռն. |
| 27. Յոհաննէս. | 45. Արևմտեան դուռն. |
| 28. Պետրոս. | 46. 47. Բեմի աստիճաններ. |
| 29. Անդրէաս. | 30. Փիլիպպոս. |

բեց եկեղեցին, այն է հաւատացեալներին ամեն տեսակ անմաքրութիւնից. Եպիսկոպոսը օծում է առաջ մէջտեղի խաչը, որ կոչւում է զազալթ, յետոյ սեղանի միւս խաչերը. Խորհըրդարանի, բեմի ճակատի, աւազանի, եկեղեցու անկիւնների, սիւների, կամարների և դռան ճակատների վրայ փորագրած խաչերը ու վերջը թափօր են կատարում շուրջը. Այդ բոլորից յետոյ ծածկում է սեղանը եօթը գոգնոցներով, դնում է նրա վրայ հինգ վառած աշտանակ, բազմեցնում է աւետարան, խաչ և անմիջապէս պատարագ է մատուցանում ինքը եպիսկոպոսը:

Օծումից յետոյ ութ օր շարունակ նաւակատիք են կատարում նոյն եկեղեցում, պատարագ մատուցանելով և կատարելով ո. Խաչի վերացման կարգը. իսկ իններորդ օրը կատարում է եկեղեցու տօնը, որի անունով օծուել էր:

Եկեղեցու հիմնարկէքի և օծման կարգը տուել է մեր Յովհան Մանդակունի հայրապետը:

Դ. ԱՍՏՈՒՄՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ— ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Եկեղեցու պաշտօնեաների զանազան աստիճանների գասակարգութիւնը կոչւում է նուիրապետութիւն:

Եկեղեցու նուիրապետութիւնը հաստատեց Քրիստոս, երբ որ ընտրեց իր համար 12 հոգի իբրև իր մշտնջենաւոր հետևողներ, երկնքի արքայութեան սերմերը ժողովրդի մէջ ցանելու համար: Նրանք աւետարանը քարոզեցին և եկեղեցի հաստատելով սկսեցին կառավարել նորընծայ հաւատացեալներին ու նրանց պէտքերը լրացնել:

Սկզբում, երբ հաւատացեալների թիւը փոքր էր, այդ 12 հոգին իրանք էին կատարում ամեն պարտականութիւն աստուածաշտութեան ժամանակ, բայց երբ հաւատացեալների թիւը մեծացաւ և առաքեալներն էլ չէին հասնում ամենին, նրանք եկեղեցու կառավարութիւնը, այսինքն հաւատացեալներին ծառայելու գործը, յանձնեցին առանձին ընտրուած մարդկանց, որոնց և ձեռնադրեցին եպիսկոպոս:

Այսպէս էլ Հայաստանի նախկին լուսաւորիչներ՝ Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալները, հայ եկեղեցու կառավարութեան գործը յանձնեցին իրանց ձեռնադրած եպիսկոպոսներին ու քահանաներին:

Եւ այսպիսով մեր եկեղեցական նուիրապետութիւնը հետևեալ աստիճաններն ու բաժանումն ունեցաւ.

ա. Ընդհանրական հայրապետ.

բ. Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս, քորեպիսկոպոս.

գ. Վարդապետ, ծայրագոյն վարդապետ.

դ. Քահանաց.

ե. Սարկաւագ.

զ. Կիսասարկաւագ.

է. Զահընկալ.

ը. Երդմնեցուցիչ.

թ. Դպիր.

ժ. Դոնապան:

Հայրապետ, Եպիսկոպոսապետ, Կարողիկոս ամենաշնչարջոց

Հայրապետը մեր ազգի ծայրագոյն անկախ
պետն է և Հայաստանեայց Եկեղեցու ընդհան-
րական պատրիարք և գէտը. ուստի և Նրա ա-
նունը յիշում՝ է պատարագին Հայաստանեաց
Քոլոր Եկեղեցիներում: Նրա գերիշնանութեան
ստորագրուում են Քոլոր հայ հոգեորականութիւնն
ու ժողովրդեան հոգեոր գործերը:

Հայրապետը կառավարում է Եկեղեցին:

Չեռնագրում է Եպիսկոպոսներ ս. Էջմիած-
նի միաբանութեան և իր հայրապետական իշ-
խանութեան տակ Եղած թեմերի համար.

Օրհնում է մեռնը.

Գումարում է ազգային Եկեղեցական ընդ-
հանուր ժողովներ.

Տալիս է կանոնական թղթեր առաքելական
և հայրապետական կանոնների համաձայն, պա-

հելով իւր նախորդների աւանդածը:

Եկեղեցականներին պարգևատրում է և
պատժում:

Որոշում է մասնաւոր կաթողիկոսների ի-
րաւունքները.

Հաստատում է վիճակներ, նշանակում և ար
ձակում է առաջնորդներ և վանահայրեր.

Նուիրակներ ու քարոզիչներ է ուղարկում
վիճակները.

Թոյլատրում է կրօնական գրքերի հրատա-
րակութիւնը.

Յանցաւորներին բանագրում է կամ ներում.


Վճիռներ է տալիս հայոց Եկեղեցու վերա-
բերեալ խնդիրների մասին, և

Վարում է ազգի կրօնական կրթութեան
հոգաւը:

Եկեղեցու կարգ ու կանոններն անփոփոխելի
են. Բայց Ազգային-Եկեղեցական ժողովը, կաթու-
ղիկոսի վճռով, կարող է լրացնել թերին և պա-
կասը:

Հայոց ազգի կաթողիկոսը ընտրւում է ամ-
բողջ ազգի կողմից համագային ժողովով, դրա
համար յատկացրած կարգերի համեմատ:

Նախ քան օծումը, նորընտիր հայրապետը,
ս. Էջմիածնի տաճարում, հանդիսապէս երգւում
է անձնուիրաբար կատարել աստուածադիր օ-
րէնքները և Հայոց ազգը առաջնորդել մեր Եկե-



ղեցու գաւանութեան և Հայրապետական կանոնների համեմատ, ամեն բանում հետեւել ո. Թադէս և Բարգուղիմէս առաքեալներին և ո. Գրիգոր Լուսաւորչին, զգուշութեամբ պահպանելով Մայր Աթոռի իրաւունքները:

Ապա օծում է ո. Էջմիածնում, տասներկու եպիսկոպոսների ձեռքով: Մրանք ո. մեռոնով օծում են նրա գագաթը և ձգում են վը-

ղեցու ծայրագոյն պետը աստուածային պատգամները տալիս է ազգին:

Հայրապետական սպիտակ ոսկեթել քողը ամեն հանդէսներին երկու սարկաւոգներ տանում են Կաթուղիկոսի առջևից:

Էջմիածնի Հայոց Կաթողիկոսը կոչւում է եպիսկոպոսապետ, աստուածընտիր հայրապետ, ծայրագոյն պատրիարք, քահանայապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց. նա անկախ է Հռոմէական և Յոյն աթոռներից:

Մեր ազգում երկու մասնաւոր կաթուղիկոսներ էլ կան՝ Սսի և Աղթամարի, որոնք ենթարկում են Մայր աթոռ ո. Էջմիածնի ընդհանրական կաթուղիկոսին: Դրանցից առաջինը կոչւում է «Կաթուղիկոս տանն Կիլիկիոյ», երկրորդը «Կաթուղիկոս տանն Աղթամարայ»:

Կան նաև երկու պատրիարքներ՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի, որոնք միայն արքեպիսկոպոսներ են և նրանց իշխանութիւնը աւելի չէ քան եպիսկոպոսինը:

Վեհափակուպոս, Խօսպիսկուպոս և Եպիսկոպոս եպիսկոպոս բառը յունարէն է և նշանակում է տեսուչ:

Եպիսկոպոսի պաշտօնն է՝
Վիճակի առաջնորդ լինել,
Քահանայ և Եկեղեցական ստորին պաշտօնեաներ ձեռնադրել,

Եկեղեցի և պատկեր օծել,
Հոգալ իւր թեմի ժողովրդի կրօնական և
բարյական պէտքերը և նրանց կրօնական դաս-
տիարակութեան մասին:

Նրա պարտաւորութիւնն է առհասարակ
կառավարել իւր հօտը, հսկելով, որ անսխալ և
անաղարտ պահպանուին նախնի սուրբ հայրերի
տուած պատուէրները, որոնք պարունակւում են
հայոց եկեղեցու կանոնգորքի մէջ:

Եպիսկոպոսացուն ընտրում է մի որեէ թե-
մի ժողովրդի և հոգեորականների հաւանութեամբ
և առաջարկում է կաթողիկոսի ձեռնադրու-
թեան համար, իբրև հովիւ և վերադիտող նոյն
թեմի:

Եպիսկոպոսացուն պէտք է լինի ամենից ար-
ժանաւորը վարքով, հաւատքով և դիտութեամբ:
Կաթողիկոսն ընտրեալին ձեռնադրում է
Էջմիածնի Մայր Տաճարում առանձին հանդիսով,
տալիս է նրա ձեռքը հովուական գաւազան և
ձկոյթին դնում է Եպիսկոպոսական մատանի,
իբրև նշան հովուական իշխանութեան:

Եպիսկոպոս ձեռնադրելու իրաւասութիւնը
պատկանում է ս. Էջմիածնի ընդհանրական կա-
թողիկոսին, բայց Եպիսկոպոս են ձեռնադրում
նաև Սուի և Աղթամարի մասնաւոր կաթուղիկոս-
ները, միայն իրանց վիճակի համար:
Արքապիսկոպոսը կամ քորեպիսկոպոսը նոյն

է աստիճանով, ինչ որ Եպիսկոպոսը, միայն առա-
ջինը աւագութեան տիտղոս է, իսկ վերջինը
վարչական կոչում. քորեպիսկոպոսները լինում
են թեմի մի մասի կառավարիչներ և վարչական
կողմից ենթարկուում են Եպիսկոպոսի իշխանու-
թեան:

Արքութիւնը տրւում է Հայրապետի օրհնու-
թեան կոնդակով:

Վարդապետ, ծայրագոյն վարդապետ

Զեռնադրութեամբ վարդապետը նոյնն է,
ինչ որ քահանան, միայն վարչական իշխանու-
թեամբ բարձր է նրանից:

Վարդապետը քահանայից արտաքուստ
ու-
րոշւում է նրանով, որ գլխին վեղար է ծած-
կում, իբրև կրօնաւորութեան և կուսական կեան-
քի նշան:

Վարդապետը մեր եկեղեցու մէջ օրէնքի և
հաւատի ուսուցիչ է և Աստծու բանի քարոզիչ:

Ժայրազոյն կոչում են այն վարդապետնե-
րը, որոնք ստացել են վարդապետական ծայրա-
գոյն աստիճան կամ իշխանութիւն Աստծու
խօսքը քարոզելու. ծայրագոյն վարդապետին ի-
րաւունք է տրւում կրել օձագլուխ գաւազան,
Մովսիսի գաւազանի օրինակով, որ օձ դարձու:

Քահանայ կոմ եւեց.

Քահանայ բառը քաղդէարէն քօհէն բառից է
առաջ եկել, իսկ երէց բառը յունարէն է. Եր-

կուսն էլ նշանակում են եկեղեցու պաշտօնեայ:

Քահանան ձեռնադրուելով և ս. մեռոնով օծուելով եպիսկոպոսից՝ ընդունում է ս. Հոգու շնորհը, որով գառնում է ժողովրդի հովիւ և իրաւունք է ստանում կատարել եկեղեցու խորհուրդները:

Քահանայի կարգը եկեղեցու խորհուրդ է, որ կատարում է եկեղեցում պատարագի ժամանակ սեղանի առջև բեմի վրայ. քահանայութիւնն ունի եօթն աստիճան.

Ա. Դոնապանութիւն,

Բ. Դպրութիւն,

Գ. Երդմնեցուցչութիւն,

Դ. Զահընկալութիւն,

Ե. Կիսասարկաւագութիւն,

Զ. Սարկաւագութիւն և

Է. Քահանայութիւն:

Մեր եկեղեցական կանոններով, երբ մէլը ցանկանում է քահանայ ձեռնադրուիլ, ձեռնադրող եպիսկոպոսի պարտքն է մեծ զգուշութեամբ քննել, թէ նուիրեալը մաքուր ամուսնութիւնից է ծնուած, մարմնական արատ (պակասութիւն) չունի, ունի՞ բաւական գիտութիւն կրօնական ուսումնա, վարք ու բարքը համապատասխան է հոգեոր կոչման թէ ոչ և ունի՞ վերջապէս հովուական հոգի և ներքին ձգտում հոգեորական լինելու:

Երբ նուիրեալն ըստ ամենայնի արժանաւոր է նկատուում, այն ժամանակ եպիսկոպոսը հանդիսաւոր կերպով ձեռնադրում է նրան և օծում ս. մեռոնով ճակատն ու ձեռքերը, Մայր Մաշտցում սահմանուած կարգով։ Յետոյ տալիս է նորընծայ քահանայի ձեռքը սկիհը և մաղղման՝ Քրիստոսի կենարար Մարմնով և Արիւնով և այդպիսով տալիս է նրան իշխանութիւն ս. պատարագ մատուցանելու կենդանիների և ննջեցեալների համար։

Նորընծայ քահանան ձեռնադրութիւնից յետոյ քառասուն օր առանձնանում է եկեղեցու սենեակում, ուր մաքուր պահեցողութեամբ վարժուում է քահանայական գիտելիքների մէջ։ Դայիշատակ է Ցիսուսի՝ մկրտութիւնից յետ անպատը քաշուելուն, ուր քառասուն օր ծոմ պահեց և աղօթքի անձնատուր լինելով՝ յաղթեց փորձողին և այնուհետեւ սկսեց իւր առաքելութեան գործը կատարել։ Այսպէս էլ նորընծայ քահանան ս. մեռոնի օծումով ստանալով սուրբ Հոգու շնորհքը՝ քառասուն օր փակւում է եկեղեցու սենեակում, ինչպէս անապատում, և աղօթքով ու պահեցողութեամբ սովորում է յաղթել աշխարհիս փորձութիւններին. ապա մտնում է իւր առաքելական պաշտօնի մէջ։

Սարկաւագ

Սարկաւագը եկեղեցու պաշտօնեայ է, որի

պաշտօնն է սպասաւորել ս. պատարագին, այն
է՝ վերաբերել Աւետարանը, Աւետարան կարդալ,
հաւատի Հանգանակն ասել և ս. խորհուրդն ըն-
ծայարանից վերաբերելով՝ պատարագիչ քահա-
նային մատուցանել:

Հին ժամանակ սարկաւագի գործն էր նաև
Եպիսկոպոսին սպասաւորել իրեւ նրա փոխա-
նորդ. ինչպէս օրինակ՝ չորրորդ դարում Խաղ
սարկաւագը մեծ Ներսէսի հիմնած քաղմաթիւ
բարեգործական հաստատութիւնների վերատեսչի
պաշտօն էր վարում նրա վոխարէն:

Սարկաւագ ձեռնադրում է Եպիսկոպոսը պա-
տարագի ժամանակ, ձգելով նրա ձախ ուսին
ուրար, որով որոշւում է նա Եկեղեցու միւս
պաշտօնեաներից: Ուրարը նշան է, որ սարկա-
ւագը Քրիստոսի լուծը կիսով չափ կարող է
վերցնել իւր վրայ:

Կիսասարկաւագ

Կիսասարկաւագը սարկաւագի օգնականն է.
Նրա պաշտօնն է զգեստաւորել պատարագիչ
քահանային, դատարկ սկիհը խորհրդանոցը տա-
նել և պատարագին սպասաւորել:

Կիսասարկաւագ ձեռնադրում է Եպիսկոպոսը,
որ հագցնելով նրան հոգեորական սքեմք՝ ձգում
է նրա ձախ ձեռքին բազկուրար կամ երկծալ
ուրար. դա նշան է թէ՛ նա անզօր է դեռ ևս
Քրիստոսի լուծը ամբողջովին վերցնելու, այլ

միայն նրա մի մասը. ձեռնադրելիս Եպիսկոպոսը
տալիս է նրա ձեռքին դատարկ սկիհն ու մաղզ-
ման և պատարագի զգեստն ու խորհրդատերը:
Զահենկալ

Զահընկալը եկեղեցու պաշտօնեայ է, իսկ
Զահընկալութիւնը քահանայութեան երրորդ աս-
տիճանն է. նրա պարտականութիւնն է Եկեղե-
ցու ջահերը վառել, ս. պատարագի համար նըշ-
խար թխել և բաժակը պատրաստել:

Զահընկալութեան աստիճանը աալիս է ե-
պիսկոպոսը, հագցնելով նուիրեալին դպրական
շապիկ և տալով նրա ձեռքը վառ աշտանակ ու
դատարկ բաժակաման:

Զահընկալները սովորաբար կոչում են
դպիր:

Երդմնեցուցիչ

Երդմնեցուցիչը եկեղեցու պաշտօնեայ է.
Հնումը նրա պաշտօնն էր ձեռք դնել հիւանդ-
ների վրայ և երդմնեցնելով՝ դեմք հալածել
մարդկանցից: Այժմ այս աստիճանը առանձին
չէ տրւում, այլ միայն ջահընկալութեան հետ:

Երդմնեցուցչութեան աստիճանը տալիս է
Եպիսկոպոսը ջահընկալութեան հետ, տալով
նուիրեալի ձեռքը Մաշտոց գիրքը, որի մէջ, ի
միջի այլոց, գրուած են սատանայից հրաժար-
ման երդմունքը մկրտութեան ժամանակ:

Թափիր կամ բնիքեցով

Դպիրը եկեղեցու պաշտօնեայ է. նրա պաշտօնն է եկեղեցում կարդալ մարգարէների և առաքեալների թղթերը:

Դպրութեան աստիճանը տալիս է եպիսկոպոսը ջանշակալութեան հետ, տալով նուիրեալի ձեռքը ձաշոց գիրքը:

Գոճապահ

Դունապանը եկեղեցու պաշտօնեայ է. նրա պաշտօնն է եկեղեցու դուռը բանալ և փակել. Եպիսկոպոսը այս աստիճանը տալիս՝ նուիրեալի ձեռքը դնում է եկեղեցու բանալին և տալիս է նրան իշխանութիւն՝ եկեղեցին բանալու և փակելու, որ աղանդաւորներին, բանադրուածներին ու չմկրտուածներին չթողնէ եկեղեցի մտնելու:

Ե. ԱՍՏՈՒՄՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՆՕԹՆԵՐՆ ՈՒ ՍՊԱԾՆԵՐԸ

Աստուածպաշտութեան կարգը կատարելու ժամանակ գործ են դրւում հետևեալ անհրաժեշտ անօթներն ու սպասները.

Ա. Սկիի

Սկիհը արծաթէ կամ ոսկէ բաժակ է, որի մէջ սպասի գինին և հացը սրբագործուում է պատարագի միջոցով և հացի ու գինու տեսա-

կով դառնում է Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն:

Սկիհընշանակում է Յիսուսի չարչանքի բաժակը, որից Յիսուս խորհրդական ընթրիքի ժամանակ հաղորդեց առաքեալներին վերնատանը:

Բ. Մաղղմայ

Մաղղման արծաթէ կամ ոսկէ բոլորակ ափսէ է կամ սկհուծածկոց, որի վրայ դրւում է սպասի նշխարը:

Մաղղման նշանակում է Փրկչի ծննդեան մսուրը և այն գերեզմանը, որի մէջ թաղուեցնրա սուրբ մարմինը:

Գ. Մասնատուփ

Արծաթէ կամ ոսկէ փոքրիկ տուփ է, որի մէջ պահուում է սուրբ խորհրդի սրբագործուած մասը՝ հիւանդներին ճաշակելու համար:

Դ. Բաժակաման


Արծաթէ մի անօթ է, որի մէջ պատրաստում է սուրբ խորհրդի գինին, որտեղից ածւում է սկհումէջ պատարագից առաջ:

Ե. Տապանակ կամ խնկաման

Տապանակը արծաթէ արկդ է,



վերևից չորս փոքրիկ խաչերով և մոմակալով
զարդարուած և գործ է ածւում մէջը խունկ ու
կնդրուկ պահելու համար։ Տապանակի գործա-
ծութիւնը հին ուխտի ե-
կեղեցուց է վերցրած։



Խնկանց եւ բուրգառ
Հին ժամանակ
խունկ ծխելու հա-
մար գործ էր ած-
ւում խնկանցը,
որ փոքր կրակա-
րանի ձև ունէր ա-
ռանց շղթաների,
վրայից ծածկած
մի ծակոտկէն
խուփ։ Խնկար-
կողը ներքեից
բռնած ման էր
ածւում այն սե-
ղանի ու պատ-

կերների առաջ և խնկի ծուխը ինքն իրան ծըլս-
ւում էր ամեն տեղ։ Այժմ էլ չէ գործածւում
խնկանցը։

Բայց կար և բուրգառ ասուած գործիքը,
որ նոյնպէս խունկ ծխելու աման է շղթաներից
կախած և մանր բոժոժներով զարդարուած, ո-



րով նոյնպէս խնկարկում էին տէրունական և
սրբերի պատկերների առաջ և ժողովրդին։ Այժմ
գործ է ածւում
բուրգառը այդ միե-
նոյն ձևով։



Բուրգառը, ինչ-
պէս յայտնի է, գործ
էր ածւում մին ուխ-
տի ժամանակ և
մենք այնտեղից ենք
վերցրել նրա գոր-
ծածութիւնը։

Է. Խաչվառ կամ վառ.

Խաչվառը խաչա-
գլուխ և ձողաբարձ
դրօշակ է, որի վրայ
նկարուած է լինում
խաչելութեան և Աս-
տուածածնի պատ-
կերները։ Խաչվառը
տանում են եկեղե-
ցական մեծ հան-
դէսների ժամանակ,
օրինակ՝ անդաստա-
նի, թափօրի, յու-
ղարկաւորութեան,
և այլն։

Խաչվառի գործածութիւնը եկեղեցում վերցրած է այս դէպքից:

Մեծ կոստանդիանոս կայսրը փոքր զօրքով գնում էր թշնամիների դէմ պատերազմ. կէս օրի ժամանակ օղի մէջ յանկարծ մի լուսեղէն խաչ տեսաւ, որի վրայ գրած էր «սրանով կը յաղթես». Յիսուսը տեսիլքի մէջ երեալով կայսեր՝ հրամայեց խաչի նշանը նկարել տալ բոլոր դրօշակների ու վահանների վրայ:

Կայսրն անմիջապէս կատարեց այդ և յաղթեց թշնամուն: Այդպիսով կուապաշտութիւնը ոչնչացաւ և ամեն տեղ փայլեց Քրիստոսի խաչը: Քրիստոնեայ եկեղեցիները, որոց թւում և մեր եկեղեցին, դրա յիշատակի համար սկսեցին խաչվառ գործածել հանդէսների ժամանակ:

Ը. Քոց

Քոցը արծաթէ բոլորաձև ճօճանակ է, եզրներին բոփոժներով զարդարած, երկու կողմերը քանդակած կամ նկարուած են վեցթևեան սրովքների պատկերներ. Քոցը հազցրած է լինում երկար ձողի վրայ, որից բըռնելով սարկաւագները պատարագի ժամանակ շարժում են սուրբ խորհրդի վրայ:



Քշոցը նշան է հրեշտակների հովանաւորութեան, սրովքների սաւառնելուն և սուրբ Հոգու իջնելուն պատարագի նուէրների վրայ:

Քշոցը գործ է ածւում պատարագի հետեւեալ միջոցներին.

«Սուրբ Աստուած» երգելիս,
Սուրբ խորհրդի վերաբերման ժամանակ,
«Քրիստոսի մէջ մեր յայտնեցաւ» ասելիս,
«Սուրբ սուրբ» երգելիս,
«Հոգի Աստուծոյ», «Հայր մեր» և «միայն սուրբ» երգելիս:

Բայց գործ են դնում նաև եկեղեցական ուրիշ հանդէսների ժամանակ. օրինակ՝ սրբալոյս մեռնը և սրբերի մասունքները վերաբերելիս, թափօրին, խաչվերացի երեկոյին, «Այսօր դասք հրեշտակաց» երգելիս և այլն:

Թ. Խաչ

Խաչը նիւթական խաչուեց մեր տէր ձևն է կամ պատկերը Յիսուսը մարդկային կենարար սուրբ խաչ ազգի փրկութեան չափայտի, որի վրայ համար:



Հայկական խաչը պարզ քառաթև ձև ունի, որպիսի էր և Քրիստոսի խաչափայտը:

Խաչի նշանակութիւնը խիստ մեծ է քրիստոնէական եկեղեցու համար. նա աստուածպաշտութեան ժամանակ գործ է ածւում:

Նախ՝ իբրև երկրպագելի պատկեր կամ նիւթ

և յիշեցնում է մեզ Քրիստոսի փրկարար տնօրէնութիւնը:

Երկրորդ՝ նրանով ենք տեառնագրում և օրհնում եկեղեցու բոլոր խորհուրդները և արարողութիւնները կատարելիս:


Երրորդ՝ վերամբարձ տանում ենք եկեղեցական բոլոր նշանաւոր հանդէսների և թափօրների ժամանակ:

Եւ վերջապէս՝ խաչը, ինչպէս պատուական և գերագոյն նշան հաւատի, շքոյ և պատուի՝ գնում են եկեղեցիների գմբէթների և թագերի գլխին և ամեն հաւատացեալ սիրով կախում է իւր կրծքին իբրև ազաւէն թշնամու դէմ:

Խաչը, իբրև երկրպագելի նշան, առաքեալների սահմանադրութեամբ, օրհնում է և օծում սուրբ միւռնով:

Փ. Միւռնաւութիւն

Միւռնաշխը արձաթէ կամ ոսկէ անօթ է, որ շինուում է աղաւնունմանութեամբ սուրբ Հոգու աղաւնակերպ իջնելու նշան. նրա մէջ պահւում է եկեղեցում սուրբ միւռնը:



Ժ.Ա. Կոնք, դոյլ, վենչակ կամ բաւկինակ

Պատարագիչ քահանայի ձեռները լուանալու համար եկեղեցում գործ է գրւում կոնք և դոյլ, իսկ ձեռները մաքրելու համար ղենջակ կամ թաշկինակ իբրև նշան մաքրութեան ամեն տեսակ աղտեղութիւնից:

Բացի սրանցից աստուածաշտութեան ժամանակ գործ են ղրտում նաև հետեւեալ օժանդակ սպասները.

Փ. Պատկեր

Եկեղեցին պատկերներ գործածելու սովորութիւնը մտցրել է հին ժամանակից սկսած, ցանկալով նորագարձ հաւատացեալների սրտերում տպաւորել սրբացած մարդկանց առաքինի գործերը:

Հայաստանեայց եկեղեցին էլ ընդունել է պատկերներ գործ ածելու սովորութիւնը և մա-

տուցանում է նրանց պատշաճաւոր յարգանք:

Փրկչական, Աստուածամօր և ուրիշ սրբերի պատկերների գործածութիւնը առաջին դարերից է սկսած, բայց ընդհանրացած է մանաւանդ չորրորդ դարից յետոյ:

Մեր եկեղեցին պատկերների վերաբերութեամբ հետեւեալ կարգն ունի սահմանած.

ա. Եկեղեցում դրուելիք պատկերները պէտք է անշուշտ նկարած լինին իւղաներկով կտաւի վրայ:

բ. Թղթի և ձուլած պատկերների գործածութիւնը միանգամայն մերժում է մեր եկեղեցին,

գ. Պատկերը պէտք է վայելուչ նկարուած լինի, որ յարգանք ազգէ բրիստոնէին և ոչ թէ իւր այլանգակութեամբ ծաղր յարուցանէ նրա մէջ,

դ. Սուրբերի պատկերների վրայ պէտք է անշուշտ սուրբ եղբորդութեան մի նշան լինի:

ե. Պատկերները պէտք է օծուած լինին ս. միւսոնվ եպիսկոպոսի օրհնութեամբ Հայաստանաց եկեղեցու մայր Մաշտոցի համեմատ, որ պէս զի սուրբ Հոգին տայ նրանց իրանց նախատիպների շնորհը:

զ. Եկեղեցիներում, բացի Տէրունական և Տիրամօր պատկերներից, կարելի է դնել յարգելու նաև այն բոլոր ազգային և օտար սրբերի

պատկերները, որոնք տօնւում են մեր եկեղեցում, բայց գերադասելի են մանաւանդ ազգային սրբերի պատկերները:

Ժ. Աւտանակը և ջահը լինում

են մեծ և փոքր և գործ են ածւում իբրև մոմակալներ լուսաւորութեան համար:

Կերոն կոչւում են այն մեծ մոմերը, որոնք գործ են ածւում աւետարանը կարդալիս և մեծ հանդէսներին. Դրանք կոչւում են նաև իւղաբերից մոմեր, որովհետեւ գործ են դրում և իւղաբերից աւետարանը կարդալիս:

Մոմերի գործածութիւնը ընդունուած էր հին ուխտի աստւածաշտութեան ժամանակ թէ վկայութեան խորանում և թէ Առղոմօնի տաճարում, ինչպէս լուսաւորութեան նպատակով, նոյնպէս էլ հանդիսին շուրջ և պայծառութիւն տալու համար:

Որովհետեւ առաջին դարերում, քրիստոնեաների հալածանքների պատճառով, աստուածաշտութիւնն ահից կատարւում էր մութ այրերում և գետնադամբան-



ներում, ուստի լուսաւորութեան համար եկեղեցին էլ ընդունել էր մոմերի գործածութիւնը: Իսկ յետոյ էլ այդ սովորութիւնը մնաց, որովհետև աստուածպաշտութեան կարգը առաւօտ և երեկոյ մութ ժամանակ կատարելու համար լուսաւորութեան պէտք կար. և թէ միենոյն ժամանակ եկեղեցական հանդէսներին շքեղութիւն և վեհութիւն տալու նպատակով:

Վառած մոմեղէնը նշան է նաև մեր վառ և բորբոք սիրոյն գէպի Աստուած:

Մեր եկեղեցում գործ է դրւում մաքուր մեղրամում:

Մոմ վառելը սովորական է ամեն ժամանակ, բայց մանաւնդ անհրաժեշտ է համարւում վառել՝ Աւետարան կարդալիս և եկեղեցական հանդէսների ժամանակ:

Փ. Գրակալ Գրակալը փայտէ ծալովի մի գործիք է, որի վրայ



են եկեղեցական գըքերը՝ աստուածպաշտութեան ժամանակ գործածելու համար:

Զ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԶԳԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԶՅՈՒԴԵՐԸ

Առաքեալներն իրանց քարոզութեան ժամանակ և եկեղեցու խորհուրդները կատարելիս տարբեր հանդէս էին հագնում ժողովրդից որոշուելու համար. այտեղից սովորութիւն եղաւ, որ հոգեգորականները աստուածպաշտութեան ժամանակ սկսեցին գործածել առանձին տեսակ զգեստներ:

Այդ զգեստների գործածութիւնը ընդունեց և Հայոց եկեղեցին, որ սահմանեց ամեն տեսակ պայծառ զգեստներ գործածել եկեղեցում Ֆիրոջ սպասաւորութիւնը աւելի փառաւոր և շքեղ անելու համար:


Մեր եկեղեցական զգեստների ձևը գլխաւորապէս վերցրած է կեսարիայի և Երուսաղէմի եկեղեցիներից. բայց տուած է նրանց աւելի ազգային ձև: Այդ զգեստները մինչև հինգերորդ դար ենթարկուեցան մասնաւոր փոփոխութեան դար կողմէից, իսկ այնուհետև, այն է ձևի և սիւթի կողմէից, իսկ այնուհետև, այն է ս. Մեսրովակ և Սահակ թարգմանիչներից յետոյ, մնաց անփոփոխ մինչև մեր օրերը:

Էջմիածնի հնութիւնների թանգարանում
պահուած բազմաթիւթանկագին զգեստները, ինչ-
պէսնաև մեր միւսնշաւոր վանքերում եղած
զգեստները վկայում են, որ հարիւրաւոր
տարիներ առաջ էլ մեր եկեղեցական զգեստներն
ու սպասները նոյն ձևն ունէին, ինչ որ այժմ:

Յ. Ընդհանուր զգեստներ

Սրեմ. բոլոր սրբազնագործ հոգևորական-
ների, այն է՝ կաթու-
ղիկոսի, եպիսկոպոսի,
վարդապետի, քահա-
նայի և սարկաւագի
սովորական հանդերձն
է կրօնաւորական սրե-
մը (վերարկուն), որով
նրանք տարբերուում
են աշխարհականնե-
րից:

Վեղար. կուսա-
կրօն հոգևորականները
տարբերուում են ա-
մուսնացած հոգեորա-
կաններից վեղարով,
որ առհասարակ անա-
պատականների գլխի
ծածկոյթն է, և սրածայր գագաթ ունի կաթու-
ղիկէի նման:



Յայտնի չէ, թէ որ ժամանակից է մտել
վեղարի գործածութիւնը մեզանում, բայց մեր
մատենագիրների մէջ յիշատակւում է տասն և
մէկերորդ դարից յետոյ:

Փիլօն. սովորական ժամերգութեան
ժամանակ կաթուղիկոսը, եպիսկոպոսը,
վարդապետն ու քահանան ձգում են
իրանց վերայ վիլօն, որ սովորաբար
սկ է լինում:

Գաւազան. գաւազանը կուսակրօն
հոգեորականների պատուի նշան է և
երկու տեսակ է լինում.

Երկգլխեան օձագարդ գաւա-
զան, որ իրաւունք ունին գործ դնել
արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները
և ծայրագոյն վարդապետներ: Օձագլուխ
գաւազանը յիշեցնում է Մովսիսի գա-
ւազանը, և այն ձողը, որի վրայ նա
բարձրացրեց օձը անապատում, իբրև
օրինակ Քրիստոսի խաչին:

Հովուական կամ գնդաձև գա-
ւազանը, որ կոչւում է նաև «կուսա-
ւորչի գաւազան», հովուի ցուպի ձև
ունի, կոր գլխով և յատուկ է միմիայն
կաթուղիկոսին, որ համայն ազգի հո-
վուապետ է համարւում:

Մատանի. կաթուղիկոսը, իբրև իշխանական



նշան, կրում է մատանի մատանէ մատում, իսկ
եպիսկոպոսը՝ ճկոյթ մատին:

Հողաթափ. եկեղեցի
մտնելիս բոլոր հոգեորա-
կանները ոտին հագնում
են հողաթափ, իսկ բեմ
բարձրանալիս հողաթափ
հագնելը պարտաւորա-
կան է ամեն հոգեորա-
կանի համար, իբրև լը-
րումն տէրունական տ-
ռակին. այն է՝ երբ ա-
նառակ որդին մեղայով
դարձաւ իր հօրը, սա
զթալով՝ հրամայեց ծա-
ռաներին հագնել նրա
ոտներին կօշիկ. այլ և
այն պատուէրի, որ Յի-
սուս տուեց առաքեալ-
ներին՝ կոխել օձերը, կա-
րիճները և թշնամու բո-
լոր զօրութիւնը:

Հողաթափը պատուի
մի ցոյց է դէպի Աստծու
տունը, իսկ պատարա-
գին, «մի ոք յերեխա-
յից» ամելիս, քահանան




հանում է հողաթափները իբրև յիշատակ այն
բանի, որ հին ուխտի ժամանակ Աստուած ասաց.

«հանիր ոտներիդ
հողաթափները,
որովհետեւ սուրբ
է այն տեղը, ուր

դու կանգնած ես:

Բ. Սարկաւագի, կիսասարկաւագի եւ դպիրների զգեստներ
Սարկաւագը եկեղեցում հագնում է շապիկ



և ձախ ուսին գցում է ուրար. Կիսասարկաւագը
նոյնպէս շապիկ է հագնում և ուրարի փոխանակ

ձախ բազկին կրում է բազկուրար: Իսկ դպիր-
ները միմիայն շապիկ են հագնում:

Ծաղիկընշան է սրբութեան և անարատութեան:

Ուրարը փոխարերական մտքով հրեշտակի
թերն է նշանակում, որովհետեւ սարկաւագը կա-



տարում է հրեշտակի պաշտօնը: Սարկաւագի ուրար
գցելը ձախ ուսին նշանակում է, որ
նա Յիսուսի լուծը կիսով չափ է
բառնում և դեռ կարողութիւն չու-
նի ամբողջապէս կրելու:

Բազկուրարը նշանակում է,
որ կիսասարկաւագը դեռ ամենե-
ւին չէ կարող այդ լուծը վերցնել
իր վրայ:

Գ. Քահանայի զգեստներ

Պատարագի ժամանակ քահա-
նան եկեղեցում գործ է դնում
հետեւալ զգեստները.

Սաղասարտ. սաղաւարտը փո-
խարինում է Ահարօնեան խոյրին.
սաղաւարտը դիպակից կամ կեր-
պասից ասղնէ գործած կամ մար-
գարտագարդ և արծաթապատ գլխանոց է, գագա-

թին փոքրիկ խաչ ամրացրած. սաղաւարտի չորս
կողմը նկարուած են Քրիստոսի տնօրինութեան
չորս գլխաւոր դէպքերը:
Սաղաւարտի գործածու-
թիւնը հին ուխտի եկեղե-
ցուց է վերցրած և նշանա-
կում է Փրկչի կրած փուշ
պսակն ու վարշամակը: Սա-
ղաւարտը գործ է դրւում
որպէս զրահ թշնամու զօ-
րութեան դէմ պատերազ-
մելու:

Ծաղիկ. շաղիկը Ահարօնի
պատմուանի օրինակն ունի. շա-
պիկը պէտք է լինի սպիտակ և
նշանակում է հրեշտակի սպիտակ
հանդերձը, որ նստած էր Յիսուսի
գերեզմանի վրայ և այն հանդերձը,
որ Հերովդէսը ծածկեց Յիսուսի
վրայ. իսկ սպիտակութիւնը նշ-
անակում է Փրկչի անախտ ծնունդն
ու անարատ կեանքը:

Փորուրար. փորուրարը ոռջե-
ւից կախ է ձգւում պարանոցի
վրայ և ծածկում է կուրծքը մին-
չև ներքեւ փորուրարը նշանակում
է այն ծանը լուծը, որ քահանան



ամբողջապէս առնում է իւր վրայ և նշանակ է արդարութեան, որով պէտք է քահանան զարդարէ իւր սիրար: Մի և նոյն ժամանակն շանակում է Յիսուսի հնագանդութիւնը և համբերութիւնը իւր կենսագործ տնօրէնութիւնները կատարելու:



Գօտի. Գօտին գործ էր դրւում և հին ուխտի եկեղեցում. դա մի լայն ժապաւէն էր, որ առջեկց ունէր մէջ տեղը արձաթի կամ ոսկէ ակնազարդ և մարգարտապատ գլուխ իբրև կապ: Գօտին նոյն ձեն ունի և այժմ մեզանում և նշան է հոգեորական քաջութեան քահանայական պաշտօնը կատարելու. միենոյն ժամանակն շանակում է Յիսուսի ողջախոհութիւնը:

Թաշկինակ. գօտու հետ քահանան կրում է և թաշկինակ, ինչպէս որ Փրկիչը սփածաւ ղենջակ և լուաց աշակերտների ոտներն ու ղենջակը սըբեց. բայց թաշկինակն իսկապէս գործնական պիտանութիւն ունի ձեռքը մաքրելու համար.

Բազպաններ. քահանայի շապկի թեզանիները պատաժ են լինում բազուկների վրայ թենոցներով, որոնք կոչւում են բազպան: Դրանք նշանակում են Յիսուսի ձեռքի կապանքներն և



նշան են բազուկների զօրութեան թշնամու գէմպատերագմելու:

Վակաս. վակասը քահանայի ուսանոցն է, որ կիսաբոլորակ ձեռվ պատում է քահանայի պարանոցը թիկունքի կողմից. վակասի վրայ սովորաբար ձուլած կամ ոսկէհուռն անկուածով ասղնէգործած է լինում տասներկու առաքեալների և մէջտեղը Յիսուսի պատկերները: Վակասը



Ահարոնի վակասին է փոխարինում և նշան է մոլորեալ ոչխարին, որ Յիսուս ուսի վրայ դըեց, այն է մոլորեալ մարդկութեան. միենոյն ժամանակ վակասը նշանակ է արդարութեան և հաւատացեաններին յիշեցնում է Փրկչի խոստացած քաղցը լուծը և թեթև բեռը,

Շուրջառ կամ նափորտ. շուրջառը փիլոնաձեւ, երկայն և անթեւ վերարկու է, որ գործ է ածւում պատարագի, սըբազան խորհուրդների կատարման, նախատօնակի, թափօրի ժամանակ, կատարման,


և աւետարան կարդալիս: Շուրջառը, որպէս հոգեւոր զրահ, նշանակում է Յիսուսի անկար քղամիդը և այն ծիրանին, որ չարչարանքի օրը ձգեցին նրա վրայ: Այլ և նշանակում է շնորհների



միութիւնը և լրումն ամենայն առաքինութեանց, որով զարդարուած էր Յիսուսի մարդկութիւնը: Թ. Նպիսկրպուական զգեստներ եպիսկոպոսը, բացի քահանայական զգեստ-

ներից, կրում է նաև՝ փոխանակ առղաւարտի՝ խոյր կաթ թագ, արտախուրակներ, եմիփորոն և գաւազան:


Թազը կամ խոյրը երկփեղնեան գլխարկ է, ականակուռ և գոհարազարդ. թագի գործածու-




թիւնը վերցրած է հին ուխտի եկեղեցուց և նշանակում է հին և նոր կտակարանների զիտութիւնը և այն իմաստութիւնը, որ պիտի ունենայ եպիսկոպոսը:

Արտախուրակները թագի ետևից կախուած կէս կանգուն երկայնութեան զարդեր են, որոնց գործածութիւնը վերցրած է հրէից քահանայագութեանների ապարօշի ձևից, որով նրանք պատում էին թագի ստորին կողմը, իսկ երկու ծայրերը արձակ կաթ էին ընկած ուսերի վրայ: Եպիսկոպոսը հինգ խաչով զարդի վրայուն. եմիփորոնը հինգ խաչով զարդարուած այն ուրարն է, որ եպիսկոպոսը կրում

Է շուրջառի վրայ և ուսերի վրայից տարածւում
է կրծքի մէջքի վրայ մինչև ոտները։ Ինչպէս
երկում է ամենահին նկարներից, Եմիփորոնի գոր-



ծածութիւնը մացած է առաքեալներից։ Եմիփո-
րոնը գործ է ածւում ամբողջ զգեստաւորութեան
ժամանակ։



Ա. Հայրապետական զգեստներ
Կալողիկոսը, բացի եպիսկոպոսական զգեստ-

ներից, գործ է դնում նաև՝ կոնքեռն, որ մի
քառանկիւնի (խաչաձև) զարդ է, մի ծայրից գոտ-
կից կախած աջ կողմը, որպէս հովուական հո-
գեոր զէնք (մախաղ)։ Կոնքեռն Յիսուսի ղենջա-
կի նշանակութիւնը ունի։ Կոնքեռն երբեմն
տրում է և պատուաւոր արքեպիսկոպոսներին
և պատրիարքներին իբրև գերագոյն յարգանքի
նշան։



Արծուէզորգ. արծիւը, իբրև բարձրաթոիչ և
սրատես՝ եկեղեցին փոխաբերաբար մաքուր և
ուղիղ վարդապետութեան նշան է համարում։
Իսկ արծուէզործի գործածութիւնը ցոյց է տա-
լիս, որ քահանայապետը իր կոչման և կեանքի
մէջ պէտք է նմանի արծուին։

Կաթուղիկոսը Հայրապետանոցից դուրս
գալիս, կը ում է ձեռքին Հայրապետական
խաչազրդ ասա, իսկ նրա առջեկց տանում
են խաչ և գաւազան:

Է. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ Ս. ԳՐԲԵՐ

Աստուածալաշութիւնը և եկեղեցական
արքազան խորհուրդները կատարելու համար
գործ են դրւում հետևեալ գրքերը.

ա. Աւետարան.

բ. Ժամագիրք.

գ. Շարական.

դ. Ճաշոց.

ե. Խորհրդատեր.

զ. Տաղարան.

է. Տօնացոյթ.

ը. Մաշտոց.

թ. Կանոնգիրք.

ժ. Յայսմաւուրք.

Ա. Աւետարան



Աւետարանը բովանդակում է
իր մէջ մեր տէր Յիսուս Քրիս-
տոսի երկրաւոր կեանքը—նրա
տնօրէնութիւնները, որ գրեցին
չորս աւետարանիչներ՝ Մատթէոս,
Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս:

Աւետարանի և առհասարակ ամրողջ Աս-
տուածանչի հայերէն թարգմանութիւնը կատա-
րուեց հինգերորդ դարում ս. Սահակ և Մեսրովակ
թարգմանիչների և նրանց աշակերտների ձեռ-
քով. այդ թարգմանութիւնը այնքան ճշշտ է և
գեղեցիկ, որ կոչւում է բոլոր լեզուների թարգ-
մանութիւնների թագուհի:

Բ. Ժամագիրք—հասարակաց կարգ աղօրից

Ժամագիրքը օրուայ ժամերի վրայ բաժա-
նուած գիրք է. նա պարունակում է իր մէջ հա-
սարակաց աստուածալաշտութեան կարգը, այ-
սինքն՝ այն աղօթքները, երգերն ու ընթերցուած-
ները, որոնցով ամեն օր հաւատացեալները, ժո-
ղովութելով տաճարը, հրապարակով պաշտօն են
մատուցանում Աստծուն:

Ժամագիրքը գրել են մեր ս. Սահակ և Մես-
րովակ թարգմանիչները և կարգաւորել են Գիւտ,
Յօհան Մանդակունի և Ներսէս Շնորհալի հայ-
րապետները:

Հայաստանեայց եկեղեցին սահմանած ունի
օրական ինն անգամ հասարակաց աղօթք, ինը
դաս հրեշտակների օրինակով, որոնք անդադար
փառաբանում են Աստծուն: Մենք էլ, երկնային
հրեշտակներին նմանուելով, աղօթում ենք օրէնը
ինն անգամ. ուստի և Ժամագիրքը բաժանուած
է ինը մասի, այն է.

ա. Գիշեր-ժամու աղօթք.

բ. Առաւտեան աղօթք.
գ. Արևագալի աղօթք.
դ. Երրորդ ժամու աղօթք կամ առաջին ո-
դորմեա.
ե. Վեցերորդ ժամու աղօթք կամ երկրորդ
ողորմեա.

զ. Իններորդ ժամու աղօթք կամ երրորդ
ողորմեա.

է. Երեկոյեան աղօթք.

ը. Խաղաղական աղօթք.

թ. Հանգստեան աղօթք.

Հին ժամանակ աստուածապաշտութեան ինը
կարգը կատարւում էր առանձին առանձին որո-
շուած ժամերին, իսկ վերջին դարերում միմիայն
օրը երկու անգամ է կատարւում. առաջին վեցը
միասին առաւտեան, իսկ վերջին երեքը՝ երե-
կոյեան։ Պատարագի օրերին երեք ողորմեան ա-
սում են ճաշին՝ պատարագից առաջ։

Վանքերում այդ բոլորը կատարւում է
հնաւանդ ձևով։

Էնդհանուր գիտելիք

Ժամերգութեան ժամանակ եկեղեցու պաշ-
տօնեաներից իւրաքանչիւրը իւր դերն ունի և
ասելիքը։

Աւագ երէցը ժամ է օրհնում և ասում է
բոլոր մաղթանքները—դասում։

Քահանաները ասում են աղօթքներ և կար-
դում են աւետարանը՝ ատեան։

Սարկաւագը ասում է քարոզներ՝ ատեան։
Ամբողջ խումբը դասէ դաս երգում է շարա-
կաններ ու երգեր։

Ժամարար քահանան պատարագ է մատու-
ցանում բեմի վրայ սեղանի առաջ։

Սարկաւագը վերաբերում է աւետարանը և
ս. խորհրդի ընծաները՝ բեմի վրայ։

Միւս սարկաւագները և կիսասարկաւագը
սպասաւորում են սեղանին բեմի աջ և ձախ կող-
մերում։

Դպիրներն ու երգեցիկ խումբը պատարագին
երգում են՝ ատեան։

Գիշեր ժամու աղօթք

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Մեր եկեղեցին, ինչպէս հասարակաց աս-
տուածապաշտութիւնը, այնպէս էլքոլորխորհուրդ-
ներն ու ծէսերը, սահմանած է սկսել և վեր-
ջացնել Տէրունական աղօթքով կամ Հայրմերով,
որ հիմն է և բովանդակութիւն ամեն աղօթքի
և որից բղնում են ամեն տեսակ խնդրուածքներ։

Գիշեր ժամու աղօթքը ուղղում ենք Հօր-
Աստծուն և նախամարդու պատուիրանազնցու-
թեան խորհուրդն ունի, որովնախամարդիկ մեր-
կան խորհուրդն ունի, որովնախամարդիկ մեր-
կան շնորհներից և նրանց բերանները փա-
կուեցան Աստծուն օրհնաբանելուց։ Ուստի մենք

մէջ գիշերին, խոստովանելով մեր մեղքերը, համարձակութիւն ենք խնդրում Հօր Աստծուց բանալու մեր բերանը և աղօթելու, այս խօսքերով. «Տէր, եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեցէ զօրհնովթիւնս քո»: — Տէր, եթէ իմ շրթունքները բաց անես, իմ բերանը կերգէ քո օրհնութիւնը:

Այդ ժամերգութիւնը կատարում ենք գիշերը դարձեալ այն պատճառով, որ Քրիստոս գիշերը յարութիւն առաւ և գիշերով պէտք է լինի մեռելների յարութիւնը:

«Զարթուցեալքս» քարոզը և «զքէն զոհանամք» աղօթքը ասել է մեր սուրբ հայրապետ Յովհան Մանղակունին:

«Օքհնովթիւն» կամ հոգետը երգ գիշերային ժամին երգում ենք այս խորհրդով: Ինչպէս Մովսէս մարգարէն իսրայէլեան ազգը ազատելով Փարաւոնի ծառայութիւնից և անապատը հանելով՝ Աստծուն օրհնութեան երդ երգեց, այնովէս էլ հաւատացեալ ժողովուրդը, Յիսուսի միջոցով ազատուելով անմաշմին Փարաւոնից կամ խաւարի իշխանութիւնից, երգում է նոյնանման օրհնութիւններ և երգեր, որոնք խորհրդաբար նկարագրում են մարգարյին ընկած բնութեան ազատութիւնը:

«Վասնաով սկսուող չորս քարոզները և չորս աղօթքները ասել է սուրբ Մահակ Պարթև հայ-

րապետը. դրանցով մենք աղօթում ենք աշխարհի և մեր անձերի խաղաղութեան և ամեն բըիստոնեաների պահպանութեան համար:

Դրանից յետոյ երգում ենք՝ Տէրունական տօներին «ալէլովիա» երգը, որ ցնծութեան և օրհնութեան նշան է. դրանով շնորհակալութիւն ենք մատուցանում Տիրոջ, որ կրկին արժանացել ենք մեր կորցրած փառքին: «Ալէլուիա» հրէից բառ է և նշանակում է «Տիրոջ օրհնեցէք»:

Պահոց և մարտիրոսաց տօներին, դրա փոխարէն, երգում ենք «թագաւոր յափտեան» երգերը, որոնցով աղօթում ենք դէպի Հայր Աստուած, միջնորդ զցելով տօնուող սրբերին, որոնք Քրիստոսի չարչարանքը իրանց անձերի մէջ կրեցին:

Առաւօտեան աղօք

(Գլխաւոր ծասերի մեկնութիւնը)

Առաւօտեան աղօթքը ուղղում ենք Աստուածորդուն և Յիսուսի յարութեան խորհուրդն ունի. որովհետև այդ ժամին երևեցաւ նա իւզբեր կանանց և լցրեց նրանց խնդրութեամբ: Ռւատի և կանանց աղօթքի սկզբում, իբրև նշան մենք, առաւօտեան աղօթքի սկզբում, իբրև նշան ուրախութեան, ասում ենք հետեւեալ օպամօսը. «Լցաք առաւօտու ողորմովթեամբ քով, ցնծացաք եւ ուրախ եղաք զամննայն աւուրս կենաց մերոց»: — Լցուեցանք քո առաւօտուայ ողորմութիւնով, ցնծացանք և ուրախացանք մեր ամբողջ կետնքում:

Յետոյ ասում ենք Հարց կոչուած շարականը, կամ երեք մանուկների երգը: Հարցի խորհուրդն այս է. ինչպէս որ մանուկները, Նաբուգոդոնոսոր արքայի պատկերին երկրպագութիւն շտալու համար, ձգուեցան հնոցի կրակի մէջ և Բանն Աստուած, իջնելով այստեղ, փրկեց նրանց այրուելուց, այնպէս էլ մենք, ամեն առաւօտ հարց շարականը երգելով, հայցում ենք Տիրոջից, որ փրկէ մեզ մեղքի կրակից: Հարցը միւնոյն ժամանակ Աղամի ազատութեան խորհուրդն ունի:

Մեծացուցէ շարականները Յիսուսի ծննդեան են վերաբերում:

Իւղաբերից Աւետարանը Յիսուսի թաղման և յարութեան խորհուրդն ունի: Իւղաբերից Աւետարանը խորանից դուրս բերելը Յիսուսի գերեզմանն է նշանակում. երկու վառած մոմերը՝ երկու հրեշտակները. իսկ խունկը նշան է իւղաբեր կանանց անուշահոտութեան, որ յարութիւնից յետոյ տարածուեց ամեն կողմ աւետարանի քարոզութեամբ:

Փառք ի բարձունս երգի սկզբի մասը երգեցին հրեշտակները Քրիստոսի ծննդեան ժամանակ: Մնացեալը հետզհետէ աւելացրին եկեղեցու հայրերը երեք տիեզերական ժողովներում: Այդ երգը երգում ենք ի խորհուրդ մարդկանց ազգակցութեան հրեշտակների հետ:

Ասացովք քարոզով աղօթում ենք աշխարհի, Հայոց հայրապետի, բոլոր հոգեոր ուխտի, թագաւորների և նրանց զօրքի, գերեալների, ճանապարհորդների և նաւորդների համար: Այլ և օդի բարեխառնութեան, պտուղների առատութեան, հիւանդների և ամեն վշացածների, անօրէնների ձեռքը ընկածների և մեռածների ու կենդանիների փրկութեան համար:

Սուրբ Աստուածը, որ կոչում է նաև երեքսրբեան երգ, երգում ենք նոյնպէս ուղելով Աստուածորդուն իբրև նշան մեր երախտագիտութեան գէպի նա:

Աւանդութիւնը ասում է, որ երբ Յովսէփ Արեմաթացին Քրիստոսի մարմինը իջեցնում էր խաչից՝ երգեց «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ», և սուրբ մարմինը գեց գերեզմանի մէջ:

Հայաստանեայց եկեղեցին նոյն հնաւանդձեով երգում է մինչև այժմ, տէրունական տօներին յարմար փոփոխելով որ խաչեցար բառերը, այսինքն՝ ծննդեան տօնին՝ որ ծնար, յարութեան տօնին՝ որ յարեար, և այլն:

Յովհան իմաստասէր կաթուղիկոսը սահմանեց սուրբ Աստուածը երգել Հայոց եկեղեցաւմ օրը երեք անգամ:

Երեք անգամ սուրբ աստուած առելուց յետոյ վերջը միջնորդ ենք ձգում նրա մօտ սուրբ Աստուածածնին, երգելով «իառաւորեալ» երգը, որ ասել է Թովմաս առաքեալը Տիրամօր թաղման ժամանակ:

Արարչական երգը գրել է մեր նշանաւոր Հայրապետ ս. Ներսէս Շնորհալին տասներկուերորդ դարում: Այդ երգը Աստծու վեցօրեայ արարչագործութեան պատմութիւնն է ներկայացնում, որով մենք յիշում ենք նրա ամենակարողութիւնը:

Արեւագափի կամ առաջին ժամու աղօրք

(Գլխաւոր մասերի մեկնումիւնը)

Արևագալի աղօթքը ուղղում ենք սուրբ Հոգուն: Այդ աղօթքը կոչում է առաջին ժամու, որովհետև կատարւում է ասիական առաջին ժամին, այն է մեր 6 ժամին:

Աստուածպաշտութեան այդ կարգը անուանում ենք Արևագալի, որովհետև այդ ժամերգութեանը երգուող բոլոր երգերով, քարոզներով և աղօթքներով խնդրում ենք սուրբ Հոգուն, որ զգալի արեգակի ծագելու հետ, լուսաւորէ մեր հոգին իմանալի արեգակի, այն է՝ Քրիստոսի լուսով. արեգակը մեր Փրկչին մանութիւնն ունի, որ արևելքում ծագելով լուսաւորեց մարդկութիւնը:

Իսկ առաջին ժամին կատարելը Յիսուսի յարութեան խորհուրդն ունի, որովհետև Յիսուս

այդ ժամին երեսցաւ աշակերտներին իւր յարութիւնից յետոյ. առաջին ժամին կատարուելը յիշեցնում է մեզ նաև միւս անգամ գալն և մարդկանց յարութիւնը:

Երրորդ ժամու աղօրք կամ առաջին ողորմեա

Երրորդ ժամու աղօթքը ուղղում ենք սուրբ Հոգուն, որովհետև երբ Պենտէկոստէի օրերը լրացան, ս. Հոգին երրորդ ժամին իջաւ վերնատանը առաքեալների վրայ:

Բացի դրանից աւանդութեամբ գիտենք, որ Տէրը այդ ժամին ստեղծեց Ադամին և Հոգու շնորհքը պարզեց նրան. այդ ժամին նախամայր Եւան խաբուեց և Հոգու շնորհքից զըրկուեց. և այդ ժամին Տէրը բեկոռուեց խաչին և աւազակին դրախտը տարաւ:

Այդ է պատճառը, որ սուրբ Հոգին ևս այդ ժամին պարզեց մեզ, որը իշնելով՝ բազմատեսակ շնորհքներով զարդարեց առաքեալներին և նրանցով՝ մեզ հաւատացեալներիս: Ուստի և երրորդ ժամին աղօթում ենք դէպի սուրբ Հոգին:

Երեք ողորմեաներին մեծ պահքի օրերին աւելանում են և մեծ քաղոզներ ու աղօթքներ, որ ասել է սուրբ Յովհան Մանդակունին:

Յիշեա Տէր զպաշտոնեայս քո քարոզն ասել է Յովհաննէս Սարկաւագ վարդապետը տասներկուերորդ դարում:

Պեցենդրդ ժամու աղօթ կամ եւլրորդ ողորմեա
(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Վեցերորդ ժամու աղօթքը ուղղում ենք Հօր Աստծուն, որից խնդրում ենք օգնականութիւն մարդկային տկար բնութեան՝ սատանայի դէմ պատերազմելու:

Միկնոյն ժամանակ վեցերորդ ժամու աղօթը ըլ կատարւում է ուղղուած նաև Աստուածորդուն ի խորհուրդ նախաստեղծի պատուիրանազանցութեան և որովհետեւ այդ իսկ ժամին Յիսուս ճաշակեց քաջախր լեզու հետ խառնած:

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՈՒ ԱՂօՔ ԿԱՄ ԵՐԵՎԱՆԻ ԱԴՐԵՍԻՑ

Իններորդ ժամում աղօթքը ուղղում ենք Աստուածորդուն, որովհետև այդ ժամին նախահայրը արտաքսուեց դրախտից և նոյն ժամին Քրիստոս աւանդեց հոգին Հօր Աստծու ձեռքը ու Ադամին ազատեց դժոխքից:

Երեկոյեան աղօթ

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Երեկոյեան ժամերգութիւնը ուղղում ենք
Աստուածորդուն և նրա թաղման խորհուրդն
ունի որովհետև Յովսէփ Արէմաթացին այդ ժա-
մին իջեցրեց Յիսուսի մարմինը խաչի վրայից
և դրեց գերեզմանի մէջ:

Խոնարհեցո սաղմոսը ասուած է Աղամի
կողմից այս խորհրդով. ինչպէս հիւանդը բժշկի
ունկնդրութիւնն է խնդրում իր ցաւը նրան

յայտնելու, այսպէս էլ նախահայրը, հոգեոր հիւանդութեամբ շաղախուած, աղերսում է Աստծուն, որ լսէ նրա ձայնին, առողջարար գեղ շնորհէ, բժշկէ իրան հիւանդութիւնից ու չարի հարուածներից:

Իսկ Ապրեցոն եկեղեցին առում է Եւայի կողմից, որովհետև երբ Տէրը հարցնում էր նըրան պաղի ճաշակման մասին՝ նա օձին պատճառքերելով կամեցաւ արդարանալ, բայց դատապարտուեց. ուստի «Ապրեցո» սաղմոսով խընդրում է ազատել իրան չարից և դատապարտութիւնից:

ՄԵՍԵՂԻ. Հին ուխտի եկեղեցում առաւօտ
և երեկոյ հաց, գառը և դորակի մի չորսորդ
մասը գինի էին դնում առաջաւորութեան սե-
ղանին. իսկ նոր ուխտի եկեղեցին, որ մարմնա-
ւորը հոգեորի փոխանակեց, հացի և գառան փո-
խանակ կարգեց երկու տուն «մեսեղի» ասել, և
գինու փոխարէն «Ուղիղ եղեցին» սաղմոսը, չորս
մասից բաղկացած:

Համբարձի փոխի և շարականի խորհութեալ
այս է. առաւտից մինչև երեկոյ աշխատելով և
վաստակելով թէ հոգով և թէ մարմնով, մենք
խնդրում ենք Աստծու օգնութիւնը, որ չտկա-
րանանք և չթուլանանք ուննջելու ժամը հասած
լինելով՝ խնդրում ենք պահպանել մեզ հոգու և
մարմնի ամեն որոգայթից:

Խաղաղական պոլիտիկա

(Գլխաւոր մասերի մեկնութիւնը)

Խաղաղական ժամերգութիւնը Քրիստոսի
դժողքը իջնելու խորհուրդն ունի, ուր սպասում
էին նրան արդարների հոգիները: Յիսուս ազա-
տելով նրանց՝ խաղաղացրեց այն նեղութիւննե-
րից, որի մէջ գտնւում էին:

Խաղաղական է կոչւում այդ ժամերգութիւնը նաև նրա համար, որ մենք ցերեկուայ աշխատանքից համնելով գիշերը, խաղաղութիւն և հանգիստ ենք տալիս մեր անձին:

Ծնորհեա մեր տէր. պատմութիւնից յայտնի է, որ երբ մի անգամ աւազակները կտմենում էին կողոպտել Սևանի վանքը և խարէութեամբ ներս մտան այնտեղ արկղների մէջ փակուած, իբրև առեսուրի ապրանք, յանկարծ հրաշալի կերպով յայտնուեց այդ և Սևանի սուրբ հայրերը երգեցին «Ծնորհեա մեզ տէր» խորհրդաւոր երգը, իսկ արկղները պահուած մարդկանցով գլորեցին ծովը:

Այդ երգը մինչև այժմ երգում ենք եկեղեցում
Խաղաղական ժամերգութեան միջոցին, իբրև յիշ-
շատակ այդ մեծ հոռաշքի և իբրև խորհուրդ հո-
գիների ազատութեան դժոխքից:

Մաղթանքով, քարոզով և աղօթքով խնդրում
ենք Աստծոց, որ պահպանէ մեզ գիշերը, իւր

լոյսը մեզ առաջնորդ տայ, որով աղաւ մնանք գայթակղութիւնից:

Austausch

Հանգստեան աղօթքը ուղղում ենք ՀօրԱստծուն, որ իւր միածնի պահպանողական աշով պահպանէ մեզ գիշերը և ամեն ժամանակ՝ թշնամու որոգայթներից:

Այդ ժամերգութիւնը կատարում ենք զիշե-
րը քնից առաջ, ուստի և կոչւում է հանգստեան:
Կոչւում է նաև եկեսցէ, որովհետև սկսւում է
Եկեսցէ սաղմոսով:

Digitized by srujanika@gmail.com

Շարականը այն գիրքն է, որ բովանդակում
է իր մէջ այն բոլոր հոգեոր երգերը, որոնք եր-
գւում են եկեղեցում աստուածպաշտութեան
ժամանակ:

Հայաստանեայց եկեղեցում երգուող հոգեւ
ւոր երգերը առաջին չորս դարում, քանի որ
հայերէն տառերը գործածութեան մէջ չէին, երգ-
ւում էին յոյն և ասորի լեզուներով. իսկ հին-
գերորդ դարից սկսած, երբ ո. Սահակ և Մես-
րովալ թարգմանիչները գտան և լրացրին հայոց
առաջին և բոլոր եկեղեցական գրքերը հայերէն
դարձրին, այդ ժամանակից շարականները երգ-
ւում են հայերէն լեզուով:

սկսուել է առաքեալների ժամանակից առաջին դարում:

Ե. Խորհրդատեսր կամ պատարագամատոյց

Խորհրդատետրը պարունակում է իր մէջ սուրբ պատարագի խորհուրդը, որ կատարում է պատարագիչ քահանան:

Մեր եկեղեցում գործածուած խորհրդատետրը սկզբում յօրինուած է սուրբ Յակոբոս Տեառնեղբօր ձեռքով և լրացրած Յովհան Ռոկբերան հայրապետի ծիսարանից: Յետոյ լրացրել են մեր եկեղեցու նշանաւոր հայրերը՝ Յովհան Մանդակունի և Գրիգոր Նարեկացին:

Իսկ պատարագի արարողութեան կարգը և երգեցմունքը աւանդել է մեզ ո. Գրիգոր Լուսաւորիչը, առնելով Կեսարիայի եկեղեցուց, որով և մեր եկեղեցին կատարում էր պատարագի խորհուրդը: Սակայն հետզհետէ աւելի ճոխացաւ և վերջնական ձեւ ստացաւ ո. Սահակ և Մերովալ թարգմանիչների և ո. Յովհան Մանդակունի հայրապետի ձեռքով:

Չնայելով որ այսքան փոփոխութիւններ կրեց պատարագի արարողութիւնը, բայց նրա գլխաւոր և էական մասեւը բոլորովին նոյնն են, ինչպէս որ կատարում էր բրիստոնէութեան առաջին դարերում:

Ա. Պատարագ

Սահմանողը, Պատարագի խորհուրդը Քրիս-

տոսի մարդեղութեան խորհուրդն է և սահմանեց ինքը Քրիստոս իւր մատնութեան երեկոյին վերնատանը, ուր առնելով հաց՝ օրհնեց ու ասաց աշակերտներին՝

«Առէք կերէք, այս է մարմին իմ»

և առնելով բաժակը՝ նոյնպէս օրհնեց և ասաց՝

«Արքէք՝ ի սմանէ ամենեքեան այս է արին իմ նորոյ ուխտի»:

Որոնց ճաշակման մասնակից անելով իւր աշակերտներին՝ պատուիրեց նրանց կատարել այդ խորհուրդը, ասելով.

«Զայս արարէք առ իմոյ յիշատակի»:

Բայց բուն և իսկական պատարագն այն էր, որ յաջորդ օրը ինքը մատոյց խաչի վրայ իւր անձը հօր Աստծուն՝ մարդկան ազգի փրկութեան համար: Եւ այնուհետև բոլոր քրիստոնեայ եկեղեցիներ՝ սրբութեամբ կատարում են այդ փրկչական աւանդը, այն է պատարագի խորհուրդը կենդանիների և ննջեցեալների համար:

Նիւթը. Պատարագի համար Հայաստանեայց եկեղեցին գործ է դնում բաղարչ հաց՝ նշխար և անապակ, այն է անջուր գինի,

Մեր եկեղեցին բաղարչ հացով է պատարագում, որովհետև այն հացը, որ Յիսուս վերնատանը բաշխեց առաքեալներին, բաղարչ էր, չըէից բաղարչակերաց տօնի պատճառով: և երկ-

բորդ՝ բաղարջ կամ անխմոր հացը օրինակ է Յիսուսի կուսածին և անապական մարմնին:

Անջուր կամ պնապակ գինի ենք գործ դնում
պատարագի համար, որովհետև գինին Յիսուսի
արեան նշանակութիւնն ունի, իսկ Յիսուսի ա-
րիւնն ևս անապական էր:

Կատարողը. Պատարագի ս. խորհուրդը ի-
րաւունք ունին կատարել միայն քահանան և
իբրև քահանայապետներ՝ եպիսկոպոսը ու կա-
թողիկոսը, որոնք պատարագ մատուցած օրը
կոչւում են՝ Ժամագրաբ:

Պատարագ մատուցանելու համար քահանան
պարտաւոր է նախապէս պատրաստուել հսկումով
և աղօթքով, հոգու և մարմի մաքրութեամբ և
խոստովանելով քահանայի առաջ իւր մեղքերը:
Նոյն պատրաստութիւնն է պահանջւում և ամեն
հաւատացեալ քրիստոնեայից, ով որ ցանկանում
է մերձենալ սուրբ խորհրդին:

Տեղը. Պատարագը մատուցւում է եկեղեցում և առհասարակ այն լուրջը մատուաներում, ուր օծուած վէմ քար կայ, սեղանի զրախ:

Պատարագի օրերը. սկզբում առաքեալներն
ամեն օր պատարադում էին, իսկ յետոյ սովո-
րութիւն եղաւ պատարագ մատուցածել շաբաթ
և կիրակի օրերը, տէրունական տօներին և հա-
սարակ օրերը հաւատացեալ ժողովրդի ցանկու-
թեամբ:

Պատարագի խորհուրդը արգելուած է կատարել Առաջաւորաց պահքի հինգ օրերն և քառասնորդական պասի լուր օրերը, բայցի շաբաթը օրերից:

Աւանդաբար պատարագ է մատուցւում ծով
բերանով, ուրեմն և ճաշից առաջ. իսկ Ծննդեան
և Զատկի ճրագալոյցներին՝ երեկոյեան է պա-
տարագ մատուցւում ի պատիւ այդ երկու մե-
ծահանդէս տօների:

Համաօս մեկնութիւն ս. պատրաստի

Զգեստաւրովթին. պատարագ մատուցանելու համար քահանան մտնում է խորան և զգեստաւրում սահմանած կարգով և ամեն մի զգեստ հագնելիս ասում է որոշուած աղօթքը:

Մինչև նա զգեստաւորւում է, դպիրները
երգում են «Խորհուրդ խորին» շարականը, որ
երգել է Խաչատուր վարդապետ Արևելցին: — Այդ
շարականի առաջին տաճ մէջ յիշւում է հրեշ-
տակների ստեղծուիլը, երկրորդի մէջ՝ Աղամի-
ստեղծուիլը, երրորդի մէջ՝ Քրիստոսի չարչա-
րանքով եղած փրկագործութիւնը, չորրորդի մէջ՝
ս. Հոգու իջնելը առաքեալների վրայ. իսկ մա-
ցեալների մէջ յիշւում է քահանայական զգեստ-
ների խորհուրդը: Վերջին տունը «Թագաւոր
երկնաւոր» վերցրած է Ծաղկագարդի շար-
կանից:

Զերք լուսավը. քահանաս կույս գալու

բանից՝ լուանում է իր ձեռքերը իբրև նշան ներքին մաքրութեան:

Խոստովանութիւն. այնուհետև քահանան ժողովրդից հրապարակով խնդրում է, որ Աստծուց խնդրեն իւր մեղքերին թողութիւն, որպէս զի վստահութեամբ մօտենայ ս. սեղանին. իսկ ժողովուրդը քահանայի բերանով մաղթում է, որ Աստուած ներէ նրա մեղքերը:

Բեմը բարձրանալ. ժողովուրդը խնդրում է պատարագիչ քահանայից, որ յիշէ իրենց պատարագին և քահանան խոստանում է յիշել նրանց անմահ Գառի առաջ. յետոյ բարձրանում է բեմը. և վարագուրով ծածկում են սեղանը՝ սպասը դնելու համար:

Սպաս դնել. գպիրները մեղեդի են երգում, իսկ քահանան ասում է Նարեկացու երկու աղօթքները և գնալով ընծայարանի առաջ նշանը դնում է մաղղմայի վրայ ու ասում. «Յիշատսկ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». և գինին խաչածե լցնելով սկիռ մէջ ասում է «Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մ' ըրոյ Յիսուսի Քրիստոսի». յետոյ սկին ու մաղղման քողով ծածկելով՝ խաչկնքում է ու խնկարկում:

Խնկարկել. վարագոյրը բացուելով՝ քահանան խնկարկելով ս. սպասին և սեղանին՝ իջնում է բեմից և խնկարկելով ժողովրդին՝ նորից բարձ-

րանում է բեմը. աշխարհ գալոցըայն խորհուրդն ունի, որ Քրիստոս աշխարհ եկաւ և աւետարանական անուշահոտութիւն տարածեց մեր մէջ:

Երեքսրբեան երգ. երեքսրբեան փառաբանութիւնը սկսւում է սարկաւագի «պոսիխումէ» ասելով, զա յունարէն «պոսէխօմէն» բառն է և նշանակում է «ուշ դարձնենք»: Երեքսրբեան երգը «սուրբ Աստուած»-ն է. երբ գպիրները երգում են այն՝ սարկաւագը Աւետարանը բարձրացնելով շրջաբերում է ի տես ժողովրդեան:

Ընթերցուած. մարգարէական և առաքելական գրքեր կարդալը նշանակում է, որ մարգարէների գուշակութիւնը և առաքեալների քարոզութիւնը Քրիստոսի տնօրէնութիւնն են յայտնում:

Աւետարան. ուստի դորանից յետոյ սարկաւագը կարդում է քրիստոսի տնօրէնութեան գիրքը, որ է Աւետարանը, իբրև լրումն օրէնքների ու մարգարէների:

Դաւանովթիւն. Աւետարանից յետոյ սարկաւագը ասում է Հայաստանեայց եկեղեցու դաւանութիւնը, որ է «հաւատամք»-ը, որպէս զի ժողովուրդը հաստատուի իւր հաւատի մէջ:

Վերաբերութիւն. սարկաւագը ասելով «մի ոք յերեխայից», հասկացնում է ժողովրդեան, որ եթէ մէջները չմկրտուածներ, թերահաւատներ և ապաշխարողներ կան, չմօտենան աստուածաւագալիքը առաջանալու համար:

յին խորհրդին։ Այնուհետև ժամարարը մերկանում է, այսինքն, եթէ եպիսկոպոս է՝ հանում է թագը, եմիփորոնը և հողաթափները, իսկ եթէ քահանայ է՝ սաղաւարտն ու հողաթափները։ ուրովինետև մինչև այդ ժամանակ ժամարարը Քրիստոսի օրինակ էր, իսկ այդ տեղից նա դառնում է ս. խորհրդի սպասաւոր։

Այդ միջոցին սարկաւագը ս. խորհրդի ընծաները հանդիսապէս վերաբերում է ընծայարանից պատարագիչ քահանային, որի ժամանակ դպիրները երգում են սրբասացութիւնը։

Հին ժամանակ այդ միջոցին բոլոր ժողովուրդը թափորով հաց ու գինի էին բերում և դնում «ընծայարան» կոչուած սեղանի վրայ։ իսկ մեր եկեղեցին սահմանած է դրա փոխարին սպասի հացն ու գինին վերաբերել։

Վերաբերման խորհուրդն այն է, որ Յիսուս մարմին առնելով՝ մարդկանց ընծայուեց։

Ողջոյն. սարկաւագը ողջոյն առնելով պատարագիչ քահանայից՝ իջնում է և ողջոյնը տալիս դպրապետին կամ եթէ եպիսկոպոս կամ քահանայ կայ՝ նրան, իսկ սրանք էլ ժողովրդին։

Ողջոյնն այն նշանակութիւնն ունի, որ Յիսուսի պատուէրի համեմատ՝ ովքեր ցանկանում են պատարագ մատուցանել՝ պէտք է հաշտուին միմեանց հետ և սիրով ողջոյն տան իրար։

Սրբազործութիւն. դպիրները երգում են հրեշ-

տակային երգը, «Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց»։ «Ովսաննա» երբայերէն բառ է ևնշանակում է «վրկիր մեզ»։

Քահանան առնում է ձեռքին նշարը՝ խաչակնքում է վրէն և բարձրացնելով՝ ասում։

«Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի բաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»։

Նոյնպէս էլ գինին օրհնելով՝ բարձրացնում է և ասում։

Արքէք ի սմանէ ամենեքեան, այս է արին իմ նորոյ ուխտի, որ յաղագս ծեր եւ բազմաց հեղանի ի բաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»։

Սրբագործութիւնը վերջանում է նրանով, որ քահանան երկրպագելով սեղանին և վերցնելով ընծաները ձեռքին՝ խնդրում է, որ սուրբ Հոգին իջնի սրանց վրայ և հացն ու գինին դառնան ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի։

Յիշատակութիւն. սրբագործութիւնից յետոյ թէ քահանան և թէ ժողովուրդն սկսում են յիշատակել կենդանին և հանգուցեալ հաւատացեալ-ներին և նրանց համար աղօթել Աստծուն ս. պատարագի միջնորդութեամբ։

Սարկաւագները սեղանի աջ կողմը գնալով՝ յիշատակում են ազգային սրբերին ու Հայ եկեղեցակում են ազգային սրբերին ու Հայ եկեղեցու նշանաւոր նահատակներին ու հայրապետ-

ներին. այն է՝ Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներին, ս. Գրիգոր Լուսաւորչին, Նրա որդոց ու թոռներին՝ Արիստակէսին, Վրդանէսին, Յուսիկին, Գրիգորիսին, մեծ Ներսէսին, Սահակ Պարթևին, Դանիէլին, Խաղ եպիսկոպոսին, Մեսովով վարդապետին, Գրիգոր Նարեկացուն, Ներսէս Կյայեցուն կամ Շնորհալուն, Յովհան Որոտնեցուն, Գրիգոր և Մովսէս Տաթևացիներին և առհասարակ Հայաստանի հովիւներին ու հովուապետներին։ Յետոյ յիշում են միանձն կրօնաւորներին, սուրբ թագաւորներին և ամեն հաւատացեալներին, որոնք հաւատով ի Քրիստոս փոխուեցան։

Իսկ սեղանի ձախ կողմը գալով յիշատակում են ամենայն Հայոց Հայրապետին և ամեն կենդանի հաւատացեալներին *):

Ճաշակումն. Գպիրները երգում են Տէրունական աղօթք «Հայր մեր». պատարագիչը ս. խորհուրդը բարձրացնելով ասում է. «ի սրբութիւն սրբոց»։ այսինքն՝ այս Տիրոջ ամենասուրբ մարմին և արինն է. Քահանան ս. խորհուրդը ձեռքին դառնում է դէպի ժողովուրդը և նրա ջերմեռանդութիւնը շարժում դէպի ս. խորհուրդը. և վարագոյրը քաշում է. Պատարա-

*) Որւսիայում այստեղ յիշում են նաև օգոստ Կայսեր և նրա Տունը, իսկ Տաճկաստանում՝ Երուսաղէմի և Կ. Պօլսի ամենապատիւ պատրիարքներին։

գիշ քահանան ճաշակում է ս. խորհրդից. Իսկ այդ ժամանակ սարկաւագներն ու դպիրները երգում են «Տէր ողորմեա» աղերսը, որ գրել է Սիմէօն կաթողիկոսը:

Վարագոյրը բացւում է, արժանաւորները հաղորդում են ս. խորհրդից և վարագոյրը նորից ծածկում է։

Գոհութիւն. դպիրները երգում են գոհացողական երգը «լցաք ի բարութեանց քոց Տէր». Ժամարարը շնորհակալութեան աղօթք է ասում ծածուկ և սաղաւարտը ծածկելով՝ քաշում են վարագոյրը. քահանան ասում է «Որ օրհնեսանշանաւոր աղօթքը և իջնում քեմից, որ նշանակում է Քրիստոսի միւսանգամ գալը աստուածային փառքով»։

Նա կարդում է աւետարանից մի գլուխ, որ իմացուի թէ մեր բոլոր հոգեոր աղօթքները Տիրով կենարար վարդապետութեամբ ենք սկսում և վերջացնում և օրհնելով՝ արձակում է ժողովրդին։

Զ. Տաղարան

Պատարագի երգերը, քարոզները, տաղերը և առհասարակ այն մասը, որ կատարում են սարկաւագներն ու դպիրները, ամփոփուած են մի գրքի մէջ, որ կոչւում է Տաղարան։

Է. Տօնացոյց

Տօնացոյցը մի հրահանգ է, որ ցոյց է տա-

լիս Հայաստանեայց եկեղեցու տօները, այդ տօներին երգուելու երգերը, շարականները, սաղմոսները, ընթերցուածներն ու առհասարակ ամեն տեսակ հանդիսակատարութիւնները, և թէ ինչպէս պէտք է կատարել նրանց։

Տօնացոյցը յօրինեցին ս. Սահակ և Մեսրովալ հայրապեանները հինգերորդ դարում և հետզհետէ կարգի դրին մեր այլ և այլ հայրապետները. իսկ վերջնական կերպով կարգի դրեց անցեալ դարում Սիմէօն կաթուղիկոսը, բաժանելով երկու հատորի, որոնք անսխալ կերպով ցոյց են տալիս մեր բոլոր տօները և նրանց վերաբերեալ ամեն տեղեկութիւններ։

Ը. Մաշտոց

Մաշտոցը այն գիրքն է, որի մէջ գրուած են եկեղեցական խորհուրդների և հոգեոր ծէսերի կատարելու բոլոր պաշտամունքը, ուստի կոչւում է և ծիսարան։

Ծիսարանը գոյութիւն ունէր առաջին դարերից սկսած, բայց յոյն և ասորի լեզուներով, որովհետև հայերէն տառերի անգործադրութեան պատճառով հայերէն եկեղեցում այդ լեզուներով էին ասուածաշպաշտութեան կարգը կատարում։

Հինգերորդ դարում ս. Մեսրովալ ծիսարանը հայերէնի թարգմանեց և կարգի դրեց, որ նրա անունով էլ կոչուեց Մաշտոց։

Այժմ ծիսարանը գործ է դրւում երկու առանձին գրքերով։

ա. Մէկը պարունակում է իր մէջ եկեղեցական խորհրդակատարութիւնները, այն է՝ մըկրտութեան և պսակի, և մի քանի ուրիշ ծիսական կարգեր, այսինքն ննջեցեալների թաղման, աղօրհնէքի, խաչալուայի և այլն. դա կոչւում է ծեռաց մաշտոց։

բ. Իսկ միւսը, բացի այդ ամենից, պարունակում է և եկեղեցու հիմնարկէքն ու օծման կարգը եկեղեցական ամեն պաշտօնեաների ձեռնադրութեան և թաղման կարգը, ս. միւսօնի օրհնութեան կարգը. և այն և դա կոչւում է մայր մաշտոց։

Թ. Կանոնիրք

Կանոնգիրքը այն գիրքն է, որի մէջ ժողովուած են առաքելական կանոնները, երեք տիեզերական ժողովների, այն է՝ Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի ժողովների կանոնները, և բացի դրանցից՝ Հայաստանեայց եկեղեցական-աղգային ժողովների կանոնները եկեղեցու կառավարութեան և բարեկարգութեան համար, որոնցով կառավարուում է մեր եկեղեցին մինչև այժմ։

Ժ. Յայսմաւուրք

Յայսմաւուրքը սուրբերի կենսագրութիւնն է, գրուած նրանց նահատակութեան կամ մա-

հուան օրերով. սրա համար էլ կոչւում է յայսամատը, այսինքն՝ այսօրուայ տօն կամ ընթերցմունք:

Յայսմաւուրք կարդալու սովորութիւնը շատ հին է. դեռ առաքելական դարում հաւատացեալները պատմում էին սուրբերի գործերը, որ լսողներն էլ հետևեն նրանց քաջութեան գործերին և առաքինի կեանքին:

Հայոց եկեղեցում կարդացուող Յայսմաւուրքը թարգմանեց Գրիգոր վկայասէր կաթուղիկոսը յոյն և ասորի լեզուներից տասնումէկեռորդ դարում. այնուհետև շատ անգամ փոփոխութեան ենթարկուեց մեր եկեղեցական հայրերից գանազան ժամանակ և լրացնելով՝ զտուեց աւելորդաբանութիւններից:

Յայսմաւուրքը մինչև տասնիններորդ դարու սկիզբը կարդացւում էր եկեղեցիններում երեկոյեան ժամերգութիւնից առաջ. այնուհետև վերացուեց այդ սովորութիւնը և այժմ միմիայն վանքերումն են կարդում:

Հ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԾԷՄԵՐ

Ծէսը և արարողութիւնը աստուածպաշտութեան արտաքին նշաններ են:

Դրանք թէկ կարեար և օգտակար են,

բայց առաքեալները հաւատի միայն գլխաւոր պէտքը սահմանեցին, իսկ արարողական մասը, իբրև երկրորդական մաս, որոնք չեն վասառում եկեղեցու վարդապետութեան միութեանը, թուղին սահմանել իրանց յաջորդներին:

Այդ պատճառով ծէսերն ու արարողութիւնները միակերպ չեն բոլոր եկեղեցիններում, այլ տարբեր, բայց այդ բոլորի ոգին, հիմքն ունպատակը միևնոյն աստուածպաշտութիւնն է:

Մեր եկեղեցու գլխաւոր ծէսերը սրանք են.
ա. Խորհուրդների կատարման ծէսերը.

բ. Տօները.

գ. Նիւթական եկեղեցու կազմակերպութիւնը.

դ. Քրիստոսի ս. խաչի, սրբերի մասունքների և պատկերների յարգութիւնը.

ե. Պատ և ծոմապահութիւն.

զ. Սրբազան արարողութիւններ.

է. Հոգևոր սովորութիւններ.

օ. Խորհուրդների կատարման ծէսերը

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ. մկրտութեան և դրոշմի խորհուրդը կատարում են մէկը միւսից յետոյ:

Ամենից առաջ եկեղեցու գաւթում, իսկ եթէ գաւիթ չունի՝ տղամարդկանց դասում քահանան կատարում է երգմնեցելու կարգը. սկզբում ոլորում է նարօտը, իսկ յետոյ ասում է հրաժարիմքն ու հաւատի դաւանութիւնը:

Նարօտը սպիտակ և կարմիր թելերի ոլորուն հիւսուածն է։ Սրա գործածութիւնը մնացել է քրիստոնէութեան առաջին դարերից, երբ հասակաւոր մկրտուղների գլխին պսակ էին գնում կամ նարօտ, որպէս յաղթութեան նշան հեթանոսութեան դէմ։ Դրա փոխարէն այժմ գործ ենք գնում սպիտակ և կարմիր թելերից ոլորուած նարօտը։

Երեսը դէպի արևմուտք հրաժարիմք ասելը ցոյց է տալիս մկրտուղնի հրաժարուելը խաւարի իշխանութիւնից, իսկ համառօտ դաւանութիւն ասելով՝ հաստատում է քրիստոնէութիւն ընդունելը։

Այնուհետև կատարւում է ջրի օրհնութիւնը. որովհետև նախահօր պատուիրանազանցութեամբ անիծուեցան նաև բոլոր արարածները, ուստի և օրհնւում է ջուրը Խաչով, Աւետարանով և ո. միւսոն ածելով, որպէս զի սրբուի և դառնայ նուիրական ջուր։

Յետոյ քահանան, նորից հաւաստիանալով, որ Երեխան ցանկանում է քրիստոնեայ դառնալ, երեք անգամ ընդլուս է ջրի մէջ ամենասուրբ Երրորդութեան անունով, որով Երեխան ազատւում է սկզբանական մեղքից։ Երեք անգամ ընկղմելը օրինակ է Քրիստոսի երեքօրեայ թաղման։

Երեխային աւազանից հանելով փաթըթում

են սպիտակ կտաւի մէջ, որ սկզբնական անմեղութեան նշան է։

Երեխային մկրտելիս՝ ազգային կամ քրիստոնէական անուն են տալիս։

Հին ուխտի եկեղեցու սովորութեամբ Երեխային, մկրտութիւնից քառասուն օր յետոյ, ծնողը տանում է եկեղեցի, ուր գրա համար սահմանուած կարգն է կատարւում ծննդականի և մըկրտուածի վրայ։

ԴՐՈՇՄ. Մկրտութիւնից յետոյ քահանան մկրտուածի զոյոր զգայարանները օծում է սուրբ միւսոնով, որով սա ստանում է ո. Հոգու շնորհը և դառնում է Քրիստոսի զինուոր։

Դրօշմից անմիջապէս յետոյ մկրտուածին հաղորդում են Քրիստոսի մարմնին և արեան։

Նորոգ մկրտածին քահանան եկեղեցական հանդէսով տանում է նրա տուն և յանձնում ծնողին։

Ա.ՊԱՇԽԱՐՈՒԻԹԻԻՆ. Ապաշխարութեան արտաքին ծէսը այսպէս է կատարւում։

Հաղորդութիւն ընդունել ցանկացողը, ի նշան իր կատարեալ զղման, ծունկ է չոքում քահանայի առջե և խոստովանում է իր բոլոր յանցանքները, ասելով սահմանեալ մեղան։

Քահանան, հարկաւոր խրատները տալուց և կարեոր չափով ապաշխարանք դնելուց յետոյ, արձակում է շնորհում նրան։

Այն քահանան, որ խոստովանութիւնը կը յայտնի ում և իցէ՝ մեր եկեղեցու օրէնքով զըրկում է քահանայութիւնից:

ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ. Զեռնադրութեան հանդէսը հայաստանեայց եկեղեցին սահմանած է տօնել ամենաշքեղ կերպով, ի նկատի ունենալով եկեղեցու պաշտօնեաների կոչման նուիրական սրբութիւնը և այդ խորհրդի վեհութիւնը:

Զեռնադրութեան մանրամաս խրատները բովանդակում են Մայր Մաշտոցի մէջ:

(Կրկնել նախընթացից «քահանայութիւնը»):

Ա.Մ.ՌՈՒՄՆՈՒԹԻՒՆ. Պսակի խորհրդից առաջ քահանան գնում է հարսի տունը և օրհնելով փեսայի տալիք նշանը՝ տալիս է հարսին: Այս սովորութիւնը այժմ նոյն իսկ պսակի օրն է կատարւում:

Նոյն օրը փեսայի տանը քահանան օրէնում է հալաւը, այն է փեսայի և հարսի հանդերձները, որ նախածնողների սկզբնական զգեստի նմանութիւնն ունի:

Յետոյ գնում են եկեղեցի և քահանան նախապէս խոստովանեցնելով փեսայացուին և հարսնացուին՝ տեղեկանում է, թէ կայ արդեօք նըկու կողմից համաձայնութիւն, յիշեցնում է նրանց պսակի խորհրդը և յորդորում է մինչև մահ անքաժան ապրել և սիրել միմեանց:

Երբ քահանան հաւասարիանում է, որ նրանը

յօժար կամքով են առնում միմեանց, զգեստաւորուելով, հրապարակով դարձեալ հարցնում է՝ համաձայն են երկուսն էլ այդ միութեան թէ ոչ. և երբ նրանք հրապարակով էլ յայտնում են իրանց յօժարութիւնը, այն ժամանակ քահանան հարսնացուի աջը տալով փեսայի ձեռքը՝ կատարում է պսակի խորհուրդը և կապում երկուսի պարանոցին նարօտ:

Հայոց եկեղեցին թագի գործածութիւնը չունի, բայց մի քանի տեղերում ընդունուած է իրերկ նորամուծութիւն:

Պսակի խորհրդի վերջին քահանան օրհնում է ըաժակը ի նշան կանա Գալիլիայի հարսանիքում Քրիստոսի կատարած հրաշքին և խմեցնում է նորապսակներին. յետոյ եկեղեցական հանդիսով տանում է նրանց տուն:

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄՆ. Հայաստանեայց եկեղեցին վերջին օժման խորհրդը կատարում է առանց օժման:

Ա.Յ.Դ. Այդ խորհրդի արտաքին ծէսը այսպէս է կատարւում. քահանան գնում է ծանր հիւանդիմօտ և սահմանած կարգը կատարելով՝ խոստովանեցնում և հաղորդում է նրան, որով հիւանդը սրբւում է ներելի մեղքերից:

Ա.Յ.Դ. գործողութիւնը կոչւում է թոշակ:

Բ. Տօներ

ՏՕՆ. տօն նշանակում է հանգիստ կամ ա-

զատութիւն աշխարհային գործերից, որ առանց
արգելը կարողանանք ծառայել Աստծուն:

Տօն օրերը եկեղեցին սահմանադրել է կա-
տարել կամ Տէրունական որևէ գլխաւոր դէպքի
և կամ նշանաւոր սուրբերի յիշատակ:

Եկեղեցին տէրունական տօները սահմանել
է այն նպատակով, որ յիշենք այն անցքերը, ո-
րոնք քրիստոնէական հաւատի հիմքն են կազ-
մում, որ մարդս կեանքի հոգսերի մէջ մի բա-
րոյական մխիթարութիւն ունենայ և Աստծուն
շնորհակալութիւն մատուցանենք նրա մեղ տուած
բարութիւնների համար: Իսկ սուրբերի տօ-
ները սահմանուած են յաւերժացնելու և յարգե-
լու առաքինի մարդկանց յիշատակը, և որպէս
զի աշխատենք նմանել նրանց կեանքի օրինակին:
Այստեղից պարզ է, որ տօն օրերը պէտք է թող-
նենք մեր աշխարհային բոլոր զբաղմունքը
և նուիրուենք աստուածահաճոյ գործերին:

Եկեղեցու անդրանիկ տօնը Քրիստոսի յա-
րութեան տօնն է, որ սահմանեցին տօնել առա-
քեալները Քրիստոսի յարութիւնից անմիջապէս
յետոյ՝ միաշաբաթ օրը, անուանելով կիւրակէ,
որ նշանակում է Տէրունական: Այդ տօնը Հայոց
եկեղեցին մինչև այժմ էլ տօնում է կիւրակի
օրերը:

Հայոց եկեղեցական տօները երկուսի են
բաժանւում՝ անշարժ և շարժական. այս առա-

ջանում է նրանից, որ Զատկի տօնը, որից կա-
խումն ունի մնացեալ տօների մեծագոյն մասը,
միշտ միևնույն օրը չի գալիս և դրա հետ միա-
սին յետ ու առաջ են շարժւում և մնացեալ տօ-
ները:

Անշարժ տօներն են՝ Մարիամ ո. Կուսի ա-
ւետումը, Յիսուսի ծնունդը, Անուանակոչութիւ-
նը, Տեառնընդառաջ. և Աստուածածնի երեք տօ-
ները:

Իսկ զատկի տօնը և մնացեալ բոլոր տօները
շարժական են:

Մեր եկեղեցին ապաշարութեան (պահք)
օրերը ոչ մի տօն չէ տօնում, բացի անշարժ
տօներից. միմիայն առաքեալների սահմանադրու-
թեամբ մեծ պասի շաբաթ օրերը կատարւում է
սուրբերի յիշատակ:

Բայց սովորական տօներից, մեր եկեղեցին
շաբաթուայ իւրաքանչիւր օրուան առանձին նշա-
նակութիւն է տալիս.

Միաշաբաթ կամ կիւրակէ՝ յարութեան և
արարչութեան առաջին օրուան է նուիրուած:

Երկուշաբթի օրը յիշատակ է հրեշտակների
և արարչութեան երկրորդ օրուայ:

Երեքշաբթի՝ մարգարէների, ո. Յովհաննէսի
և արարչութեան երրորդ օրուայ:

Չորեքշաբթի՝ ս. կուսի Աւետման և արար-
չութեան չորրորդ օրուայ:

Հինգշաբթի՝ առաքեալների և արարչութեան
հինգերորդ օրուայ:

Ուրբաթ՝ սրբերի, Քրիստոսի թաղման և հան-
գըստեան:

Տօների տեսակները. Տօները երկու տե-
սակ են. Տէրունական և սրբոց:

Տէրունական բոլոր տօները, որոնց թւում
և Աստուածածնի տօները, պահում ենք կիւրա-
կի: Իսկ սուրբերի տօներից կիւրակի են պահում
միայն մի քանի նշանաւոր ընդհանուր և ազգային
սրբերի տօներ. մնացեալները չեն պահում:

Տէրունական տօներ

Տէրունական կոչւում են այն տօները, ո-
րոնք Քրիստոսի երկրաւոր կեանքի նշանաւոր
դէպքերի յիշատակին են նուիրուած. դրանք են՝

Ավրիլի 7. ս. կուսի Աւետում: Աւետեաց
տօնը անշարժ է և կատարւում է միշտ ապրիլի
7-ին, որովհետև կապ ունի Քրիստոսի ծննդեան
տօնի հետ, իսկ աւետումից մինչև Քրիստոսի
ծնունդը ինն ամիս է:

Յունուարի 6. Քրիստոսի ծնունդ եւ Մկրտու-
թիւն: Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօնը
նոյնպէս անշարժ է և կատարւում է միշտ յու-
նուարի 6 ին:

Առաջին չորս դարում բոլոր քրիստոնեա-

ներն այդ տօները կատարում էին միասին յու-
նուարի 6 ին: Հինգերորդ դարից միւս ազգերը
Քրիստոսի ծնունդը սահմանեցին տօնել դեկտեմ-
բերի 25-ին, իսկ մկրտութիւնը յունուարի 6-ին,
բայց Հայոց եկեղեցին հաստատ մնաց առաքե-
լաւանդ սահմանադրութեան վրայ և մենք մին-
չև այսօր երկու տօնն էլ տօնում ենք միասին
յունուարի 6-ին: Այդ տօնը տեսում է ութ օր
առանց պասի:

Յունուարի 13. Տիրոջ անուանակոչովթիւն.

**Փետրուարի 14. Տիրոջ քառասնօրեայ տա-
ճար տանուիլը:**

Ժաղկազարդ. Քրիստոսի հանդիսաւոր մուտ-
քը երուսաղէմ որի յիշատակը կատարում է
Զատկի նախընթաց կիւրակէ:

Զատիկի կամ Յիսուսի յարութիւն: Յիսուսի
յարութիւնը պատահնեց Նրէից Պասէքի տօնին,
այն է նրանց Եգիպտոսից գուրս գալու օրը:

Պասէք նշանակում է ելք. զատիկ նոյնպէս
նշանակում է անշատումն, հեռանալը. այդ պատ-
ճառով էլ Յիսուսի յարութեան տօնը կոչւում
է Պասէք կամ Զատիկ, որովհետև ինչպէս
Հրէաները ազատուեցին Եգիպտոսի ծառայու-
թիւնից, այնպէս էլ Յիսուս իւր յարութիւնով
մարդկային ազգը ազատեց յաւիտենական մահից
և ընդհանրական յարութեան յոյս պարգևեց մեզ:

Յիսուսի յարութեան տօնը, իբրև անդրանիկ

տօն, ամենայն շքեղութեամբ ենք կատարում. նախընթաց երեկոյին լինում է նաւակատիք և այդ երեկոյին պատարագից յետոյ թաթախուում ենք ուտիսի կերակուրներով, բացի մսից:

Երեկոյեան լինում է ճրագալոյց, այսինքն եկեղեցիներում և ամեն տեղ ճրագավառութիւն է լինում:

Գիշերը հսկում է լինում:

Առաւօտը լինում է թափօր և յետոյ հանգիսաւոր պատարագ:

Պատարագից յետոյ քահանաները գնում են ժողովրդի տները աւետելու Քրիստոսի յարութիւնը:

40 օր յարութեան տօն է կատարում և ուտիս է լինում:

Համբարծոմ, որ կատարում է միշտ Զատկի քառասներորդ օրը:

Սուրբ հոգու գալուստը վերնատանը. Պենտէկոստէ կամ Յինունք: Այդ տօնը կոչւում է Պենտէկոստէ (50 օր), որովհետեւ հրէաները Պասէքի յիսներորդ օրը տնում էին և սուրբ Հոգին այդ տօնին իջաւ առաքեալների վրայ:

Հոգեգալստեան տօնը, ս. Ներսէս Շնորհալու սահմանադրութեամբ, կատարում է եօթօր, պասով և պատշաճաւոր շարականներով:

Քրիստոսի պայծառակերպովթիւնը թափոր սարի վրայ: Այդ տօնը կոչւում է Վարդավառ

որովհետեւ երբ ս. Գրիգոր Լուսաւորիչը տօներէր սահմանում, հին հայոց Վարդավառ տօնի փոխարէն կարդեց պայծառակերպութեան տօնը, որի անունը Վարդավառ մնաց մինչև այժմ, ինչպէս նաև հին Վարդավառի տօնական սովորութիւնները, այն է միմեանց վրայ ջուր ցանելը և աղաւնի թոցնելը:

Ս. Խաչ.—ս. Խաչի վերացումը և Խաչգիւտ: Խաչվերացի տօնը կատարում է մեծ հանգիսով: Այդ օրը երեկոյեան մի ափսէի վրայ բազմեցնելով կենաց փայտի մասունք պարունակող Խաչը և զարդարելով ուեհանով, ծաղիկներով և վարդաջրով՝ թափօր են հանում եկեղեցու գաւթում ու տեառնագրում աշխարհի չորս կողմերը: Խաչվերացի տօնը կատարում է ութ օր:

Ասուածածնի տօներ

Վերափոխումն: Վերափոխման տօնը շարժական է և կատարում է օգոստոս ամսոին. այդ օրը եկեղեցիներում ս. պատարագից յետոյ կատարում է խաղողի օրհնութիւն:

Դեկտեմբերի 9. յղութիւն ս. Աստուածածնի Աննայից:

Մեպտեմբերի 8 ս. Կուսի ծնունդը:

Նոյեմբերի 21 ս. Կուսի երեքամեայ տաճար տանովիլը.

Հոգեգալստից յետոյ չորրորդ կիւրուկի տօնւում է Աստուածածնի տիկոյ գտնան տօնվը, իբրև յիշատակ այն գէպքի, որ երկու իշխաններ, ուստա գնալով Երուսաղէմ, մի հրէայ կնոջ մօտ գտան Աստուածածնի գլխադիրը և տարան կոստանդնուպոլիս, ուր պատրիարքը հանդիսով դնում է եկեղեցում և տօն սահմանում:

Վերափոխումից յետոյ երրորդ կիւրակի օրը տօնում ենք Աստուածածնի Դօսին գտնելու յիշատակը, որ գտնուելով Երուսաղէմում տարան Կ. Պոլիս և ի պատիւ նրա առանձին եկեղեցի շինելով՝ դրին այնտեղ:

Սուրբերի գլխաւոր տօներ

Սուրբերի գլխաւոր տօները, երբ մեր եկեղեցին կիւրակի է պահում, հետեւեալներն են.

Ս. Թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների և Հայաստանի առաջին Լուսաւորիչների տօնը:

Թաղէոս առաքեալի և Սանդուկիս կուսի նահատակութեան տօնը:

Հայաստանի երկրորդ Լուսաւորիչ՝ ս. Գրիգոր Հայրապետի չարարանքի և վիրապ մտնելու տօնը:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Վիրապից դուրս գալու տօնը:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Նշխարները գտնելու տօնը Գառնիկ ճգնաւորի ձեռքով:

Ս. Էջմիածնի տօնը, որ ամենամեծ հանդի-

սով կատարուում է Հայաստանի բոլոր եկեղեցիներում յունիս ամսին:

Գարզիէլ եւ Միքայէլ հրեշտակապետների տօնը:

Ս. Սահակ եւ Մեսրովպ թարգմանիչների տօնը, որոնք գտան Հայոց տառերը, թարգմանեցին Աստուածաշունչ գիրքը և ուսումնարաններ բաց անելով՝ ուսում և դպրութիւն տարածեցին ամեն տեղ հայ լեզուով:

Ս. Վարդանանց գօրավարների և հազար երեսուն և վեց վկաների նահատակութեան տօնը:

Ամենայն սրբոց տօն: Բացի վերը յիշած սրբերից և մնացեալ երկրորդական սրբերից, որոնց տօնում է եկեղեցին, մեր եկեղեցին սահմանած ունի դարձեալ մի տօն՝ ամենայն սրբոց անունով այն ամեն անձերի յիշատակի համար, որոնք իրանց կեանքը անցըել են սրբութեամբ և առաքինական գործերով, բայց չեն տօնում կամ որոնց գործերը յայտնի չեն եղել:

Տօնական յատուկ շաբաթեւր

Բացի յիշատակած տօներից և մնացեալ սրբերի յիշատակներից՝ մեր եկեղեցին տարուայ շաբաթների մեծ մասը նուիրած ունի աւետարանական զանազան առակների կամ կրօնական գէպերի յիշատակին. դրանք են.

Մեծ ՊԱՍԻ առաջին և երկրորդ կիւրա-

կիները կոչւում են արտաքսման և յիշատակ է Աղամի արտաքսուելուն դրախտից:

Երբորդ կիւրակին կոչւում է Անառակի և յիշատակ է անառակ որդու առակին, որ Յիսուս պատմեց իւր աշակերտներին:

Չորրորդ կիւրակին կոչւում է Տնտեսի և յիշատակ է տնտեսի և մեծատան ու աղքատ Դազարոսի առակներին:

Հինգերորդ կիւրակին կոչւում է Դատատրի և յիշատակ է անիրաւ դատաւորի առակին:

Վեցերորդ կիւրակին կոչւում է Գալստեան և յիշատակ է Քրիստոսի առաջին և երկրորդ գալստեան:

Ա.Ի.Դ.Շ.Բ.Ա.Թ. կոչւում է մեծ պահքի վերադին շաբաթը, որ Յիսուսի չարչարանքի, մահուան և թաղման խորհուրդն ունի, իսկ իւրաքանչիւր օրն առանձին խորհուրդ ունի. այսպէս՝

Երկուշաբթի օրուայ երգերն ու ընթերցւածներն աշխարհի արարչութեան, Աղամի արտաքսման և Աստուծոյ տուած խոստման են նուիրուած:

Երեքշաբթին յիշատակ է Ջրհեղեղի, տասը կոյսերի, քանքուների առակին և վերջին դատաստանին:

Չորեքշաբթին յիշատակ է Սոդոմ Գոմորի կործանման և Յուղայի մատնութեան: Չորեքշաբթի գիշերը սովորական ժամերգութիւնից յե-

տոյ, կատարւում է գիշեր ժամու աղօթքը կամ եկեսցէ:

Հինգշաբթի յիշատակ է խորհրդական ընթերիքի վերնատանը, ուր Քրիստոս սահմանեց հաղորդութեան խորհուրդը:

Այդ օրը երեկոյեան ժամին կատարւում է ոտնալուայի կարգը, որի խորհուրդն այս է, թէ ինքը Փրկիչը և տէրը խոնարհեց և լուաց իւր աշակերտների ոտները, որով սիրոյ և խոնարհութեան յորդոր կարգաց իւր աշակերտներին և աւետարանի հետեւողներին:

Նոյն գիշերը կատարւում է հետևեալ օրուայ՝ աւագ ուրբաթի գիշերային և առաւօտեան ժամերգութիւնը, չարչարանքի կարգը և կարդացում է Յիսուսի կտակը:

Ուրբաթ օրը յիշատակ է Քրիստոսի խաչելութեան և մահուան: Ճաշի ժամերգութեանը կատարւում է խաչելութեան, իսկ երեկոյին՝ Յիսուսի թաղման կարգը հանդիսաւոր կերպով:

Շաբաթ օրը Քրիստոսի թաղման յիշատակն է: Երեկոյեան կատարւում է նախատօնակ, ճրագալոյց է լինում և պահքը լուծւում է ամեն տեսակ ուտիսի կերակրով, բացի մսից:

Յինոնք: Զատկից մինչև Հոգեգալուստ եղած յիմնօրեայ միջոցը կոչւում է յինունք կամ յինանց օրեր (յիմնունք 50 օր). և այդ ժամանակի կիրակիները սրանք են.—

Զատկի հետևեալ կիւրակին կոչւում է նոր կիրակի կամ կը կնազատիկ. այդ կիրակին այն խորհուրդն ունի, որ Յիսուս իւր յարութիւնից յետոյ երևաց իր աշակերտներին վերնատանը և Թովմա առաքեալը հաւատաց Յիսուսի յարութեան։

Երրորդ կիւրակին կոչւում է աշխարհամատրան։ Աշխարհամատրան կոչւում է այն առաջին եկեղեցին, որ առաքեալները հիմնեցին վերնատան կից, ինչպէս նաև բոլոր նշանաւոր և աւագ եկեղեցիները։ Մեզանում Աշխարհամատրան կոչւում է Մայր Աթոռ Կաթոլիկէ Եջմիածինը։

Չորրորդ կիւրակին կոչւում է կարմիր կիրակի։ Հինգերորդ կիրակի ս. խաչի Երեւման տօն է իրեն յիշատակ այն դէպքի, որ 351թ. մայիսի 7-ին Քրիստոսի ս. Խաչը խաչաձև ճառագայթներով փայլեց օդի մէջ Գողգոթա սարի գլխին, որի լոյսը տարածւում էր մինչև Զիթենեաց սարը։

Եօթներորդ կիրակին կոչւում է Երկրորդ ծաղկազարդ և այս խորհուրդն ունի. — աւանդութիւն կայ, որ երբ ս. Գրիգոր Լուսաւորիչը Խորվիրապի մէջ էր, մի հրեշտակ սպասաւորում էր նրան։ Համբարձման չորրորդ օրը՝ կիրակի հրեշտակն էլ չէ երկում և միւս օրը ս. Գրիգորը պատճառը հարցնելով՝ իմանում է, որ այդ օրը երկնքում հրեշտակների դասը տօնում էր Յիսուսի երկրից համբառնալու և երկինքը մտնելու տօնը. և այդ օրը հրեշտակների չորրորդ

դասակարգութեան տօնն էր։ 12. ըդ դարում Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը սահմանեց հանդիսով տօնել այդ օրը և զրեց այդ առիթով մի յատուկ շարական «Մեծահրաշ» սկսուածքով։

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԻՆԵՐ. Հոգեգալստից յետոյ առաջին կիրակին կոչւում է յարութեան առաջին կիրակի և այնուհետեւ բոլոր կիրակիները յարութեան են կոչւում մինչև բուն բարեկենդան։

Մնացած գլխաւոր տօներ

Հոգեգալստի երկրորդ շաբաթը Արարատեան դաշտի տօնն է և Հայոց նուիրական տօների գլխաւորները տօնւում են այդ շաբաթուայ ընթացքում։

Երկուշաբթի տօնւում են Հոփիսիւթան կոյսերը։

Երեքշաբթի Գայիխանեան կոյսերը։

Հինգշաբթի Յովհաննէս Կարապետ և Աթողինէ եպիսկոպոսը, որոնց նշխարները սուրբ գրիգոր Լուսաւորիչը գետեղեց Տարօն գաւառի Մուշ գիւղաքաղաքում, իւր շինած եկեղեցու մէջ։

Շաբաթ ս. Գրիգոր Լուսաւորչի Խորվիրապից գուրսու գալու տօնն է և

կիրակի՝ ս. Էջմիածնի Համագգային տօնը։ Այդ բոլոր տօներն էլ կատարւում են նախատօնակներով և մեծ հանդիսով, մանաւանդ ս.

էջմիածնի տօնը, որ ս. Լուսաւորիչն է սահմանել հէնց շինելուց յետոյ:

Հոգեգալստի երկրորդ կիւրակէի շաբաթ օրը տօնում ենք Մթձ ներսէս հայրապետի տօնը, որ չորրորդ գարում վարելով հայրապետական իշխանութիւնը՝ նշանաւոր ծառայութիւն արաւ եկեղեցուն և ժողովրդին, հիմնելով բազմաթիւ աստուածահանոյ և բարեգործական հաստատութիւններ և կարգելով նրանց վրայ կառավարիչ իւր սարկաւագ Խաղին:

Վերափոխման բարիկենդանի շաբաթ օրը նվիշոսի տիեզերական սուրբ ժողովի 200 հայրապետների տօնն է. այդ ժողովը գումարուեց 431 թուին Եփեսոս քաղաքում, ուր դատապարտեցին յունաց Նեստոր աղանդաւոր պատրիարքին: Նեստորը Յիսուսին լոկ մարդ էր համարում և ս. Կուսին՝ մարդածին և ոչ աստուածածին: Եփեսոսի ժողովը խոստովանեց Յիսուսին Աստծու ճշմարիտ որդի և սուրբ կոյսն Աստուածածին:

Վերափոխման շաբաթ օրը տօն է Շողակաթի ս. Էջմիածնի, ըստ տեսլեան մեր ս. Գրիգոր Լուսաւորչի: Այդ տօնը յիշատակ է ս. Լուսաւորչի տեսելքին, երբ մի լուսեղէն մարդ, այն է Աստծու Միածին Որդին, ոսկէ ուռը ձեռին, իջաւ Վաղարշապատի քաղաքամիջում և նրա իջման տեղը (Էջմիածին) լուսեղէն կերպով գը-

ծագրուեց մայր եկեղեցու շինութեան ձեր և աստուածեղէն շողը կաթեց այնտեղ, որի համար և ասում ենք Շողակաթ:

Սուրբ խաչի վերացման բարիկենդանի շաբաթ օրը է Նիկիայի տիեզերական ս. Ժողովի 318 հայրապետների տօնն է. այդ ժողովը գումարուեց 325 թուին Նիկիա քաղաքում, ուր հերքեցին Աղէքսանդրացի Արիոս երեցի աղանդը և գրեցին հաւատի դաւանութիւնը «Հաւատամքը»: Արիոսը քարոզում էր, թէ Որդին Աստուած ծնուած չէ Հօր էութիւնից:

Ս. Խաչի վերացման տօնից երկու շաբաթ յետոյ տօնում ենք Վարազի ս. Խաչի տօնը: Յայտնի է, որ Հոկիսիմեան կոյսերը Հոռմից Հայաստան փախչելով՝ նախապէս բարձրացան Վարագ սարը. այնտեղ Հոկիսիմէ կոյսը թաղեց Քրիստոսի խաչափայտի մտաւնքը, որ ժառանգաբար անցել էր իրան և որ կրում պարանոցին: Խաչափայտի այդ մասը 653 թուին մի հրաշքով յայտնուեց նոյն սարի վրայ ճգնուող Թօգիկ ճգնաւորին և Ներսէս երրորդ Շինող կոչուած հայրապետը այս խաչի պատուին տօն և պաս սահմանեց հոկտեմբեր ամսուն: Այդ տօնն է ահա Վարազի ս. Խաչի տօնը:

Առանձին առանձին տօնում ենք Հայոց երկու նշանաւոր թաղաւորների տօնը, Ազգարի, որ Քրիստոսի ժամանակ Հայաստանում առաջին ան-

գամ քրիստոնէութիւնը տարածելու դլխաւոր պատճառը եղաւ, և Տքղատի, որ մեծապէս նպաստեց Հայաստանի երկրորդ լուսաւորութեանը քրիստոնէական լուսով:

Աւագ տօներ

Ծննդեան տօնից առաջ, ս. Յովհան Օձնեցի Հայրապետի կարգադրութեամբ, տօնում ենք չորս տօներ առանձին առանձին, իբրև Յիսուսի ծննդեան վկաների, որոնք և կոչւում են աւագ տօներ. դրանք են՝

ա. Խափիթ մարգարէի եւ Յակովը առաքեալի.

բ. Ստեփանոս նախավկայի,

գ. Գետրոս եւ Պողոս առաքեալների, եւ

դ. Յակովոս առաքեալի եւ Յովհաննէս աւտարանչի յիշատակը:

Այս տօները կատարւում են նախատօնականերով:

Ծննդից մինչև բուն բարեկենդանը տօնում են հետևեալ գլխաւոր տօները.

Յովհաննէս Մկրտչի ծնունդը, որ տօնում է ծննդեան ութօրէքի հետևեալ օրը:

Եւլոնդեանց քահանաների տօնը, որով մենք յիշում ենք հինգերորդ դարի քաջարի պատերազմեանը հաւատական համար, ուր նահատակուեցան Յովսէփ կաթողիկոսը, Սահակ եպիսկոպոս, Ղեոնդ

երէց և ուրիշ շատ ընտիր և անձնազոհ հոգեռականներ:

Ղեոնդեանց տօնը կատարում ենք բուն բարեկենդանի երեքշաբթի օրը:

Վարդանանց զօրավարների՝ և հազար երեսուն և վեց վկաների նահատակութեան տօնը մեծ հանդիսով կատարում է նոյն շաբաթի հինգշաբթի օրը։ Քաջ Վարդան զօրավարը իր ընկեր նախարարների և 60 հազար քաջ հայերի հետ նահատակուեցան հաւատի համար Աւարայրի պատերազմում պարսիկների ձեռքով։

Բուն բարեկենդանի շաբաթ օրը տօն է միշտ Կոստանդնուպոլիսի սուրբ ժողովի հարիւր յիսուն հայրապետների, որ գումարուեց 381 ժուկն կ. Պոլսում և նզովեցին կ. Պոլսի պատրիարք Մակեդոնին, որը հայհոյում էր սուրբ Հոգուն։

Գ. Եփրական եկեղեցու կազմակերպութիւնը

Նիւթական եկեղեցին զանազան ազգերի մէջ տարբեր է լինում թէ արտաքին ձևով ամբողջապէս կամ մասամբ և թէ նրա ծիսակատարութիւններով։ Իսկ թէ ինչպէս է այդ ամենը կատարում մեր եկեղեցին՝ արդէն մանրամասն ասել ենք իւր տեղում։

(Կրկնել «Աստուածաշաշտումեան տեղը—եկեղեցին»։)

Դ. Ա. Խաչի, սրբոց մասունքների ու պատկերների յարգութիւնը

Հին գարերից սկսած, Քրիստոսից յետոյ, խաչի նշանը, իբրև տէրունական և մարդկային

աղքի փրկութեան նշան, յարգում և պատւում էին քրիստոնեաները, բայց ոչ թէ կռապաշտների պէս պաշտում նրան։ Այսպէս էլ շատ վաղուց սովորութիւն մտաւ եկեղեցին զարդարել փրկչական պատկերով և հին ու նոր կտակարանի զանազան դէպերի նկարներով։

Մենք, բացի յարգանքից, նաև համբուրում ենք պատկերները, բայց այդ համբոյը ոչ թէ անզգայ պատկերին ենք տալիս, այլ նրա նախատիպին, մեր մտքերը ուղելով դէպի պատկերի Տէրը, որին աղօթում ենք կամ նրանց միջնորդութիւնը խնդրում։

(Կրկնել Ե. զինից «Խաչ» և «Պատկեր»)։

Ե. պատ և ծով

Պաս կամ պահեցողութիւնն այն է, որ մարդիկ որոշեալ օրերին զրկում են իրանց մսեղէն և իւղեղէն կերակրներից։

Իսկ ծոմը անսուազութիւն է, որպիսի օրերը ոչինչ չէին ուտում մինչև երեկոյ, իսկ երեկոներն էլ գրեթէ հացով ու ջրով էին լուծում. ինչպէս նաև Հայերն էլ՝ լուծում էին աղով ու հացով, որից քառա նորդական պասը անուանուեց աղուհացից օրեր։

Պասը սահմանուած է ժուժկալութեան համար, որպէս զի մարդս կարողանայ զսպել իրան որկրամոլութիւնից և գեղիս կեանքից. պասը պարտադիր է ամեն քրիստոնէի համար, իսկ ծոմը միայն կամաւոր է։

Առ հասարակ պաս օրերը հայոց եկեղեցին տօն չէ կատարում, որովհետև պասը ապաշխարութեան օր է, իսկ տօնը ուրախութիւն է։

Առաքելաւանդ կարգով հայաստանեայց եկեղեցին սահմանած է ամեն չորեքշաբթի եւուրբաթ պահնել՝ առաջինը ի պատիւ Աստուածամօրաւետման, իսկ երկրորդը իբրև յիշատակ Յիսուսի խաչելութեան և այդ օրերը սուրբերի տօներ ամենաին չեն լինում։

Բացի դրանցից հայոց եկեղեցին Տէրունական հինգ տօների և իւրաքանչիւր ամսուայ համար մի մի շաբաթ պաս ունի, այն է 17 շաբաթ։ Սրբերի համար մեր եկեղեցին պաս չունի սահմանած, այլ միայն տօն, իսկնրանց անունով կոչուած պասերը՝ ամսական են։ Օրինակի համար՝ ս. Սարգսի, Եղիական, Լուսաւորչի և ս. Յակովի պասերը ամսական պասեր են։

Շաբաթապասերը հետեւալներն են.

ա. Դեկտեմբերի 30-ից մինչև յունուարի 5-ը ի պատիւ Քրիստոսի ծննդեան, և այդ ժամանակ տօներ չեն տօնում բացի շաբաթ օրից։

բ. Առաջաւորաց պաս 5 օր. չորս օր առանց տօների, իսկ ուրբաթ օրը՝ Յովիան մարգարէի յիշատակ։

գ. Քառասնորդական կամ մեծ պաս, յիսուն օր, որոնցից իւրաքանչիւր շաբաթ սրբերի տօներ են կատարուում։

դ. Եղիական պաս, 5 օր, Հոգեգալստի տօն,
ե. Լուսաւորչի պաս, 5 օր, Երեքը սրբերի
տօներով:

զ. Վարդապառի պաս, 5 օր, առանց տօների:
է. Աստուածածնի վերափոխման պաս 5 օր,
առանց տօների:

ը. Սուրբ Խաչի վերացման պաս 5 օր, ա-
ռանց տօների:

թ. Վարդագի և. Խաչի պաս 5 օր, Երեքը
սրբերի տօներով:

ժ. Յիսուսակաց պաս, 5 օր, առանց տօների:
ժա. Սուրբ Յակովի պաս, 5 օր, Երեքը
սրբերի տօներով:

Սրանցից Աստուածայայտնութեան, Յարու-
թեան, Վարդավառի, Վերափոխման և ս. Խաչի
վերացման պասերը կոչւում են Նաւակատիքի
պասեր:

Աստուածայայտնութեան և Յարութեան
ճրագալուցի օրերն ու միւս երեք պասերի շա-
բաթ օրեր մեր Եկեղեցին արգելած է մսի գոր-
ծածութիւնը՝ հրեաներից որոշուելու համար, ո-
րոնք այդ օրերը զո՞ն էին անում:

Զ. Մրբազոն առարողութիւններ

Բացի հասարակաց աղօթքից և ս. խորհուրդ-
ների ծէսերից՝ Եկեղեցին ունի սրբազան արա-
րողութիւններ, որոնք են՝

Խաչալուայ. ինչպէս որ հրեշտակը իջնելով

Պրոպատիկէ աւագանի մէջ՝ ջուրը խառնում էր
և նրա մէջ լողացողները առողջանում էին ի-
րանց ցաւերից, այնպէս էլ Եկեղեցին ընդունած
է ջրի օրհնութիւնը և առանձին կարգ ունի սահ-
մանած դրա համար։ Քահանան խաչով ու ա-
ւետարանով երեք անդամ տեառնագրելով՝ օր-
հնում է ջուրը, որով սրբւում է ջուրը հաւա-
տացեալներին սրբելու համար։

Ննջեցեալների թաղում։ Հայոց Եկեղեցին
ննջեցեալների թաղումը կատարում է առանձին
հանդիսով, դրա համար Մաշտոցում որոշուած
կարգով։ Թաղման կարգերը երեք տեսակ են.
տղայաթաղ, մեծի թաղման և քահանայաթաղ։

Բոլոր ննջեցեալների թաղմանը միատեսակ
գործ են դրւում հետևեալ ծէսերը. լուացում,
պատանելը սպիտակ կտաւով, մոմ վառել և
խունկ ծխել, ամբիծք ասել, թաղման, այգի,
եօթնօրեայ, քառասունքի և տարելիցի կարգը և
գերեզմանօրհնէք։ Իսկ քահանաների, եպիսկոպոս-
ների ու կաթողիկոսների թաղման կարգը աւե-
լի մեծ հանդիսով է լինում և, բացի վերոյիշեալ
ծէսերից, դրանց զգեստաւորում են ամբողջ զգես-
տով և օծում ս. միւռոնով։

Լուանալը հնուց մնացած սովորութիւննէ
ի նշան յարգանքի դէպի ննջեցեալը։

Պատանը անապականութեան նշան է։

Մոմը Յիսուսի գերեզմանի երկու հրեշտակների օրինակն է:

Խունկ կ ծխելը յարգանքի նշան է դէպի հանգուցեալը:

Ա. մբի ծքը առաքեալների ժամանակից է մնացած, որ կատարւում էր գիշերը ննջեցեալի մեղերի թողութեան համար:

Ա. յգի և եօթնօէ էից կարգը առնուած է հին ուխտի եկեղեցուց և մեղանում կատարւում է պատարագ մատուցանելով. իսկ քառասնիցը առաքեալների սահմանադրութեամբ է կատարւում, իբրև յիշատակ Քրիստոսի քառասնօրեայ համբարձման:

Տարելիցը և գերեզմանօրինէքը կատարելով՝ պետում ենք ննջեցեալներին երկրորդ գալստեան յոյսը,

Մաղթանք, կեանքի առանձին դիպուածներում եկեղեցին սահմանել է առանձին մաղթանք կատարել, հայցելով տիրոջ օգնութիւնը. այն է երաշտի, մորեխի և ժանտախտի ժամանակ, թափօր կատարելով աշխարհիս չորս կողմերը. իսկ ծանր հիւանդութեան և այլ պատահարների ժամանակ կատարւում են մաղթանքներ ցանկացողի համար առանձին:

Տնօրինէք, հաւատացեալների տները Ծընսդեան և Յարութեան տօներին աւետելու սովորութիւնը սկսուած է առաքեալների ժամա-

նակից և պարտաւորական է մեր քահանաների համար Աւետարանով և եկեղեցական զգեստով այդ տօներին գնալ ամեն առւն և օրհնել:

Կալորհնէք եւ հնձանօրհնէք: Կալը և հնձանը գլխաւորապէս օրհնում են այն նպատակով, որ գրանք են ս. խորհրդի համար նուիրական ընծաները մատակարարում — հայը և գինին: Միւս կողմից ս. Լուսաւորչի սահմանադրութեամբ քահանաներն օրհնում են կալը և հնձանը՝ երկրի բերքերից իրանց ապրուստի համար պասանորդ ստանալու նպատակով:

Մատաղ: Մատաղը մեղանում զոհ չէ համարւում, որովհետեւ ինքը Յիսուս գոհուեց խաչի վրայ մեր փրկութեան համար. այլ մեր մէջ ընդունուած է մատաղ անել Տէրունական և սրբերի նշանաւոր տօներին ի յիշատակ ննջեցեալների՝ աղքատներին կերակրելու համար, իբրև հոգեհաց. իսկ աղը օրհնում ենք մատաղացու կենդանուց սրբելու սկզբնական անէծքը:

Զգեստ, Սկիհ եւ Մաղզմայ օրհնել: Եկեղեցական զգեստներն ու անօթները օրհնում ենք, որպէս զի նրանք որոշուին հասարակ զործածական զգեստներից և անօթներից և սրբուելով նուիրական գործածելի լինին Աստծու սպասուրութեան համար:

Է. Հոգեւոր աւանդութիւններ

Կան և ուրիշ շատ հոգեոր աւանդութիւններ, որոնք աւանդաբար հասել են մեզ կամ իբրև յիշատակ որևէ է կրօնական դէպքի և կամ հաւատացեալների ջերմեռանդութիւնը արծարծելու միջոց:

Գլխաւոր աւանդութիւնները սրանք են.

Մասն: Ովքեր պատարագին չեն հաղորդում, այդպիսիներին ո. Սեղանից անմասչթողնելու համար՝ փոխանակ հաղորդութեան բաժանում են մասը. մասը պատրաստում է բաղարջ հացից և մինչև պատարագի վերջը պահում է սեղանի ետեր:

Ժամոց, յիշելիք եւ գանձանակ, Ժամոց և յիշելիք քրիստոնեան տալիս է քահանային, որ նա իր ննջեցեալներն ու կենդանիները յիշէ անմահ պատարագին և միևնոյն ժամանակ որպէս զի նրանով քահանան իր ապրուստը հայթայթէ: Իսկ գանձանակը սահմանեցին առաքեալները՝ աղքատներին և կարօտեալներին օգնելու համար:

Ուխտ: Առաջին դարերում քրիստոնեանները սուրբերի նաշատակութեան տարեդարձներին գնալով նրանց գերեզմանների վրայ շինած մատուռները, կատարում էին աստուածպաշտութեան կարգը, բռնութեան ահից, որից սովորութիւն մնաց եկեղեցիները ուխտ գնալ:

Սեղան: Քրիստոնէութեան առաջին դարե-

րում ննջեցեալների տէր հաւատացեալները սովորութիւն ունէին յատուկ սեղան պատրաստել և եկեղեցի տանել, ուր ըոլոր հաւատացեալները միասին ժողոված վայելում էին այստեղից մնացել է աւանդաբար, որ հինգ նաւակատիքի տօներին ննջեցեալի տէրը սեղան էր ուղարկում քահանային: Այս սովորութիւնը վերացել է արդէն:

Ուր բաժաննելը: Ծաղկազարդի առաւօտեան ժամերգութեանը «Փառք ՚ի բարձունս»-ի ժամանակ բաժանում են ուռի ոստեր, իբրև յիշատակ Քրիստոսի երուսաղէմ մտնելուն, երբ Հրէաները առաջ գնացին նրան ձիթենու և արմաւենու ճիւղերով:

Կարագ բաժաննելը ոտնալուային: Կարագը յիշատակ է այն կնոջ, որ իւղով օծեց Յիսուսի գլուխը Սիմօն բորոտի տանը:

Հրավառութիւն: Հայաստանում, Բագառինջ գիւղում Արամագգի մենեան կար, որի տօնը կատարում էին վետրուար ամսին, հրապարակում կրակ վառելով և պար բռնելով նրա շուրջ. երբ Տեառնընդառաջի տօնը սահմանուեց վետրուար ամսի 14-ին, հեթանոսական տօնը վերացաւ, բայց վայտ վառելու սովորութիւնը մնաց. այս սովորութիւնն էլ վերացած է այժմ:

Աղաւնի թոցնելու սովորութիւնը Վարդապառի տօնին մնացած է յիշատակ Նոյի աղաւնի թոցնելուն, իբրև ջրհեղեղից աղատուելու յիշատակ:

ՅԱՐԵԼՈՒԱԾ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԺՈՒԻԹԻՒՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐՈՒՅՑ

9. *hōgōrō* (ホゴロ)

- Աւ. երէց.— Հայր մնը.
Տէր եթէ զշրթունս.
Օրհնեալ համագոյ.
Սարկ.— Տէր զի բաղում.
Զարթուցեալքս.
Բահ.— Զքէն դոհանամք.
Աւ. երէց.— Օրհնեալ տէր մհր.
Դասէդաս.— Օրհնութիւն շարական-պահոց կտմ մար-
տիրոսաց ձայնից.
Աւ. երէց.— Մաղթանք ձայնից.
Սարկ.— Զորս քարոզներ ձայնից.
Բահ.— Զորս աղօթքներ ձայնից.
Դասէդաս.— Թագաւոր յաւկտեան.
Աւ. երէց.— Զորս աղօթքների մաղթանք՝ ձայնից: Հոյի
մեր.

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒՅՑ

- | | |
|------------|-------------------------------|
| Աւ. երէց.— | Հայր միկ. |
| | Տէր եթէ զշըթունս, |
| | Օրհնեալ համագոյ. |
| Ատեան. | Տէր զի բաղում ձայնով. |
| Խմբովին | |
| Դասէղաս.— | Փառք հօր. |
| | Յիշեսցուք. |
| | Զարթիք. |
| Սարկ. և | |
| Դպիրներ | Զարթուցեալք. |
| Ատեան | |
| Դասէղաս.— | Առաւօտ լուսոյ. |
| | (Մարտ. տօնին. Աշխարհ ամենայն) |
| Քան. — | Զքէն գոհանամբ. |

- | | | |
|--|--------------------------------------|--------------------|
| Աւ. երէց.— | Օրհնեալ տէր մեր. | |
| Դասէղաս.— | Հանգստեան շար. | |
| | Սաղմոս. | |
| Քահ.— | Աւետարան տաճարի | ձայնից |
| Դասէղաս.— | Աստուածանեղ. | |
| | Երգ օրուան պատշաճի. | |
| Աւ. երէց.— | Հոգւոց. | |
| Սարկ.— | Եւ ևս խաղ. վասն հանգուցեալ. | |
| Քահ.— | Քրիստոս որդի. | |
| Աւ. երէց.— | Հայր մեր. | |
| Սարկ.— | Եւ ևս. | |
| Աւ. երէց.— | Օրհնութիւն և փառք. | |
| Դասէղ.— | Օրհնութիւն շարական Յարութեան ձայնից. | |
| Աւ. երէց.— | Մաղթանք. փառք հրաշափառ. | |
| Սարկ. եւ դափիրները | ատեան, ձայնով. | Զորս բարող ձայնից. |
| Քահ.— | Զորս աղօթք ձայնից. | |
| Դասէղաս.— | Ալէլուիա ձայնից. | |
| Աւ. երէց.— | Մաղթանք ձայնից. | |
| | Հայր մեր. | |
| ՄԵԾ ՊԱՍԻ | | |
| Նոյն կարգն է կատարւում հետևեալ տարբերութեամբ և փոփոխութիւններով. | | |
| ա. Բոլոր քարոզները ասւում են թիւ. | | |
| բ. Նոյնպէս և «Տէր զի բազումը»: | | |
| գ. Պաշտաման՝ կարգը այսպէս է փոխւում. | | |
| Օրհնեալ տէր մեր. | | |
| Այսօր անձառ—հերթով. | | |
| Սաղմոս—նշանեցաւ. | | |
| Աւետարան՝ խաչելութեան ձայնից. | | |
| Նորոգող—ձայնից. | | |
| Երգ՝ Զարհուրեցան. | | |
| Հոգւոց և հայր մեր. | | |
| դ. Օրհնութիւն շարականը—յատուկ. | | |
| ե. Մաղթանքներն ու ալէլուիան՝ խաչի. | | |
| ԾԱՆ. Մի քանի տէրունական նշանաւոր տօներին օրհնութեան շարականից առաջ ասւում է հետևակ շարական՝ պատշաճի. | | |

ԱՌԱԽՈՑԵԱՆ

ՀԱՍՏՐԱԿ ՕՐՈՒԱՅ

Աւ. երէց.—Հայր մեր.
Լցաք առաւօտու.

Սարկ.—Աւլախ եղաք.

Աւ. երէց.—Փառք հօր.

Սարկ.—Այժմ և միշտ.—և ևս.

Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.

Դպիրներ.—Օրհնեալ ևս տէր.

Աւ. երէց.—Օրհնեցէք ամենայն գործք.

Դասէղաս.—Հարց շարական ըստ պատշաճի.

Սարկ.—Եկեալքս.

Աւ. երէց.—Յօդեալ տէր զցօղ. (Յարութեան՝ Հզոր յաղթող):

Դպիրներ.—Մեծացուցէ փոխ.

Դասէղաս.—Մեծացուցէ շարակ ըստ պատշաճի.

Սարկ.—Սուրբ զԱստուածածինն.

Քահ.—Ընկալ տէր.

Դպիրներ.—Ողորմիա—փոխ.

Դասէղաս.—Ողորմեա շարական ըստ պատշաճի.

Սարկ.—Երկրագիմք.

Աւ. երէց.—Բարեխօսութեամբ (յարութեան՝ ողորմած գթած).

Դպիրներ.—Օրհնեցէք—փոխ.

Դասէղաս.—Շարական տէր երկնից.

Դասէղաս.—Փառք ի բարձունս (կիւրակի և տէրունական տօներին՝ ատեան).

Աւ. երէց.—Փառք պատիւ.

Դասէղաս.—Առաւօտու երգ—ձայնից ըստ պատշաճի.

Սարկ.—Փառաւորեսցուք—պահոց օրերին, զճպդնութիւն—մարտիրոսաց, Առաջնորդք—հայրապետաց. Մայր սուրբ—Աստուածածնի, Ասասցուք—կիրակիները.

Քահ.—Գոհանամք.

Դասէղաս.—Սուրբ Աստուած—Յ անդամ ըստ պատշաճի. Փառաւորիալ.

Աւ. երէց.—Փրկել զմեղ.

Սարկ.—Եւ ևս խաղ. վասն լսելի.

Աւ. երէց.—Օրհնութիւն և փառք.

Դպիրներ.—Օրհնեցէք մանկունք—փոխ.

Դասէղաս.—Մանկունք շար, ըստ պատշաճի և ձայնից.

Սարկ.—Վասն խաղաղութեան.

Քահ.—Սուրբ ևս տէր.

Դպիրներ.—Բանից իմոց—պահոց. սիրեցի—մարտիւրուաց.

Դասէղաս.—Արարչական. պատշաճի.

Աւ. երէց.—Քրիստոս Աստուած մեր—սրբոց.

Սարկ.—Սուրբ ձգնաւորօք.

Քահ.—Պահկիչ կամ Որ ընարեցիր.

Աւ. երէց.—Խաչ քո եղիցի—պահոց.

Սարկ.—Աղաչեսցուք.

Քահ.—Օգնեա մեղ.

Սարկ.—Յիշեա տէր զպաշտօնեայս բո.

Քահ.—Բարեբար և բազումողորմ.

Աւ. երէց.—Հայր մեր.

ԿՐՄԱԿԻ ՕՐՈՒԱՅ

Մինչև մեծացուցէ նոյնն է, մեծածուցէ,
շարականից յետոյ՝

Սարկ. և դպ.—Վասն սուրբ տեղույս՝ ձայնով ատեան.

Քահ.—Դու ևս թագաւոր.

Դասէղաս.—Եղիցի—ձայնով.

Արի տէր. Արի և մի մերժեր.
Թագաւորեսցէ.

Քահ.—Աւետարան իւղարերից. ձայնից.

Դասէղաս.—Փառք յարութեան.

Սարկ.—Զուարձացեալքս.

Քահ.—Ամենակիցոյց.

Յետոյ Ողորմեա շարականը և նոյն կարգով շարունակւում է մինչև «Օրհնեցէք մանկունք», որի փոխարէն՝

Դասէղաս.—Եղիցի անուն տեսան օրհնեալ.

Քահ.—Աւետարան բժշկութեան—ձայնից.

Դասէղաս.—Երրաստեղծեալ. ձայնով.

Սարկ.—Խնդրեսցուք.

Դասէղաս.—Կեցո, տէր ողորմեա.

Քահ.—Քոմ ամենազօր.

Աւ. երէց.—Հայր մեր.

ՄԵԾ ՊԱՍԻ

Մեծ պահքին բոլոր քարոզներն ասւում են թիւ.
նոյն կարգն է կատարւում ինչ որ հասարակ օրը մին-
չև մանկանց շարականը, յետոյ՝
Քահ. — Վասն խաղաղութեան.
Քահ. — Սուրբ ես տէր.
2 Քահ. — Տէր ամենակալ.
Քահ. — Եկեալքս ի խոստովանութիւն.
» Տէր Աստուած փրկութեան մերոյ.
Դպիրներ. — Բանից իմոց.
Դասէդաս. — Արարչական.
Աւ. երէց. — Խաչ ըռ եղիցի և այլն մինչև վերջ.
Արթիվալի

Աւ. երէց. — Հայր մեր.
Եղիցի անուն տեառն.
Սարկ. — Ի նա օրհնեսցին.
Աւ. երէց. — Փառք հօր.
Սարկ. — Այժմ և միշտ. — և ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Դասէդաս. — Յարեկից երգ.
Սարկ. — Յարեկից մինչև ի մուտո.
Քահ. — Յարեկից — ազօթք.
Դպիրներ. — Աղաղակիցից — փոխ.
Դասէդաս. — Ճղնաւորք — երգ.
Աւ. երէց. — Աղաչեմք ողորմեաց.
Սարկ. — Սուրբ ճգնաւորք.
Քահ. — Սուրբ ես տէր.
Դպիրներ. — Աստուած Աստուած իմ — փոխ.
Դասէդաս. — Լոյս արարիչ լուսոյ — երգ.
Աւ. երէց. — Լուսովդ քո Քրիստոս.
Սարկ. — Փառաւորեսցուք.
Քահ. — Զառաւոտու ազօթս.
Դպիրներ. — Տէր հովուեսցէ — փոխ.
Դասէդաս. — Ճանապարհ և ճշմարտութիւն.
Աւ. երէց. — Տէր ուղղեա.
Սարկ. — Աղաչեսցուք.
Քահ. — Օրհնեալ ես տէր.
Աւ. երէց. — Հայր մեր.

ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒԻ

Աւ. երէց. — Հայր մեր.
Օրհնեալ հոգիդ.
Սարկ. — Ողորմեա — փոխ.
Դասէդաս. — Օրհնեմք զքեղ.
Աւ. երէց. — Յամենայն ժամու.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Սարկ. — Խնդրեսցուք.
Քահ. — Առաջնորդեա.
Սարկ. — Յիշեա տէր.
Քահ. — Բարերար և բազումողորմ.
Դպիրներ. — Տէր հովուեսցէ.
Սարկ. — Գոհաբանելով.
Քահ. — Խաղաղութեամք.
Աւ. երէց. — Հայր մեր.

ՄԵԾ ՊԱՍԻ

Օրհնութիւն և փառքից յետոյ՝
Սարկ. — Միաբան ամենեքեան.
Քահ. — Որ ի քրովբէական
Դպիրներ. — Աստուած օրհնեալ.
Սարկ. — Խնդրեսցուք.
և այլն ըստ կարգին:

ՎԵՅԵՐՈՐԴ ԺԱՄՈՒԻ

Աւ. երէց. — Հայր մեր.
Օրհնեալ հայր սուրբ.
2 Քահ. — Ողորմեա. ատեան.
Աւ. երէց. — Յամենայն ժամու.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Սարկ. — Վասն հիւանդաց.
Քահ. — Փարատեա.
Սարկ. — Յիշեա տէր.
Քահ. — Բարերար և բազումողորմ.
Դպիրներ. — Երանի որ խորհի.
Սարկ. — Խնդրեսցուք.

Քահ. — Հայլ գթութեանց.
Աւ. երէց. — Հայլ մեր.
ՄԵԾ ՊԱՍԻ
 Դասէղսս. — Խաւարեցաւ.
Աւ. երէց. — Յամենայն ժամու.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Սարկ. — Արթուն մտօք.
Քահ. — Զգեցո մեղ տէր.
Դպիրներ. — Տէր մի յիշեր.
Սարկ. — Վասն հիւանդաց.
 և այլն ըստ կարգին.
ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒԻ
Աւ. երէց. — Հայլ մեր.
 Օրհնեալ որդիդ սուրբ.
 2. քահ. Ողորմեա—ատեան.
Աւ. երէց. — Յամենայն ժամու.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Սարկ. — Աղաչեցուք.
Քահ. — Անկեալ առաջի քո.
Սարկ. — Յիշեա տէր.
Քահ. — Բարեբար և բազումողորմ.
Դպիրներ. — Սիրեցի—փոխ.
 (Այսեղ ուտեաց օրերը ասւում
 է հանգստեան շարական ձայնից).
Աւ. երէց. — Հոգւոցն հանգուցելոց.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան. վասն հանգուցեալ.
Քահ. — Քըլստոս ուղի.
Աւ. երէց. — Հայլ մեր.
ՄԵԾ ՊԱՍԻ
 Ողորմեա-ից յետոյ
 Դասէղսս. — Զարչարակցեալ.
Աւ. երէց. — Յամենայն ժամու.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն.

Սարկ. — Սուրբ սրտիւ.
Քահ. — Տէր զօրութեանց.
Դպիրներ. — Տէր մի մատներ.
Դասէղսս. — Նահապետաց.
Սարկ. — Աղաչեցուք.
 Եւ այլն ըստ կարգին.
ԵՐԵԿՈՑԵԱՆ
ՀՍՍԱՐԱԿ ՕՐՈՒԱՅ
Աւ. երէց. — Հայլ մեր.
 Ես առ Աստուած կարդացի.
Սարկ. — Սպասէի.
Աւ. երէց. — Փառք հօր.
Սարկ. — Այժմ և միշտ. և ես խաղ.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Դպիրներ. — Խոնարհեցո—փոխ.
Աւ. երէց. — Փառք քեզ Աստուած.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Դպիրներ. — Ապրեցու—փոխ.
Աւ. երէց. — Օրհնեալ տէր.
Սարկ. — Հասեալքս ի ժամ.
Աւ. երէց. — Հասեալքս ի ժամ.
Դպիրներ. — Մեսեդի պատշաճի.
 Ուղիղ եղեցին.
Սարկ. — Աղաչեցուք:
Քահ. — Լուր ձայնից մերոց.
Դասէղսս. — Սուրբ Աստուած. փառաւորեալ.
Աւ. երէց. — Փրկել զմեզ.
Սարկ. — Եւ ևս խաղաղութեան.
Աւ. երէց. — Օրհնութիւն և փառք.
Դպիրներ. — Համբարձի.
Դասէղսս. — Համբարձի շարականը.
Սարկ. — Վասն խաղաղութեան.
Քահ. — Հայլ գթած.
Դպիրներ. — Որ բնակեալ.
Աւ. երէց. — Զբարձրեալն գթիստոս.
Սարկ. — Եւ մեք միաբան.
Քահ. — Յոյս կենաց.

Սարկ.— Յիշեա տէր.
Քահ.— Բարերար և բաղումողում.
Աւ. երէց.— Հայր մեր.

ԿիրԱԿՆԱՄՏԻ

Ապրեցո-ից յետոյ՝
Դասէդաս.— Լոյս զուարթ—ձայնով.
Եկեալքս ի մտանել.
Մհսեղիքից յետոյ Աղաչեսցուքի փոխարէն
քարոզ Ասասցուք:
Հայր գթածից յետոյ՝ փոխ—Աստօրհնեցէք.

Սարկ.— Խնդրեսցուք.
Դասէդաս.— Կեցո տէր. Տէր ողորմեա.
Քահ.— Թագաւոր խաղաղութեան.
Աւ. երէց.— Հայր մեր.

ԽԱԴԱԴԱԿԱՆ

Աւ. երէց.— Հայր մեր.
Տէր Աստուած փրկութեան.
Սարկ.— Մացեն աղօթք իմ.

Աւ. երէց.— Փառք հօր.
Սարկ.— Այժմ և միշտ. և ևս խաղ.
Աւ. երէց.— Օրհնութիւն.

Դափիներ.— Ի կարգալ իմում.
Դասէդաս.— Շնորհեա մեզ Տէր.
Աւ. երէց.— Ի մերձենալ.

Սարկ.— Գոհացարուք.
Քահ.— Տէր բարերար.
Դափիներ.— Տէր լոյս իմ.

Դասէդաս.— Նայեաց սիրով.
Աւ. երէց.— Տէր մի դուռըցաներ.
Սարկ.— Աղաչեսցուք.

Քահ.— Շնորհատու բարեաց.
Դափիներ.— Երանեալեն. Բաժին կամ Արարի—հերթով.
Դասէդաս.— Ի քէն հայցեմք.

Խոմիք— Ատեան—մի տուն ստեղի.—մեծի պահոց
չորրորդ երկուշաբթի օրից մինչև Ղազարու
յարութիւնը.
Աւ. երէց.— Հոգւոցն հանգուցելոց.

Սարկ.— Եւ ևս խաղաղութեան.

Քահ.— Բըիստոս որդի.
Աւ. երէց.— Հայր մեր.

ՀԱՆԳՍՏԵԱՆ

Աւ. երէց.— Հայր մեր.
Առաքեա տէր զլոյս բո.

Սարկ.— Մտից առաջի.
Աւ. երէց.— Փառք հօր.

Սարկ.— Այժմ և միշտ. և ևս խաղ.
Աւ. երէց.— Օրհնութիւն.

Սարկ.— Եկեսցէ.
Աւ. երէց.— Անձն իմ ի ձեռս քո.
Սարկ.— Աղաչեսցուք.

Քահ.— Տէր Աստուած մեր, զուպահեա.

Դասէդաս.— Խաղաղութեամբ քով.

Քահ.— Աւետարան (հանգստեան).

Սարկ.— Սուրբ խաչիւս.
Քահ.— Պահպանեա.

Աւ. երէց.— Հայր մեր.
Անկանիմք.
Քահ.— Ընկալ քաղցրութեամբ.
Աստուած յաւիտենական.
Որդի Աստուծոյ.

Միաբան.— Փոխէփոխ.— Հաւատով խոստովանիմ.
Աւ. երէց.— Վասն սրբուհոյ Աստուածածնիմ.

Սարկ.— Սուրբ զաստուածածինն.

Քահ.— Ընկալ տէր.
Աւ. երէց.— Հայր մեր.
Պահն հանգստեան աղօթու.

Քահ.— Փառք քեզ տէր.

Աւ. երէց.— Օրհնեալ եղերուք.

Ա. ԱՍՏՈՒՄԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

- ա. ի՞նչ է աստուածպաշտութիւնը.
 բ. Սահմանողը.
 գ. Տեսակները.
 դ. Եղանակը.
 ե. Կոչնակ և զանգակ.
 զ. Լեզուն.
 է. Հասարակաց աստուածպաշտութեան մասերը.
- Բ. ՄՐԲԱՋԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
- ա. Խաչակնքել.
 բ. Երկրպագել.
 գ. Ծնրադրութիւն.
 դ. Խնկարկել.
 ե. Օրհնել խաչով, աւետարանով և այլն.
 զ. Թափոր և անդաստան.
 է. Նախատօնակ.
 ը. Հսկումն.

Գ. ԱՍՏՈՒՄԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ – ԵԿԵՂԵՑԻ

- ա. Արևելեան և Արևմտեան եկեղեցի.
 բ. Տաճարի ձեզ.
 դ. Եկեղեցու մասերը.
 Քաւիթ,
 Ատեան,
 Քաս,
 Աւազան,
 Բհմ կամ ամբիոն,
 Սեղան,
 Վարագոյր,
 Խաչկալ,
 Ընծայարան կամ խորհրդանոց,
 Սարկաւագատուն կամ խորան,
 Եկեղեցու հիմնարկէքը,
 » նաւակատիքը,
 » օծումը.

Դ. ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ – ՆՈՒԻՐՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵ-

- ՑՈՒՑ

- բ. Եպիսկոպոս.
 դ. Վարդապետ.
 դ. Քահանայ.
 ե. Սարկաւագ.
 զ. Կիսասարկաւագ.

- է. Զահընկալ.
 ը. Երդինեցուցիչ.
 թ. Դպիր կամ ընթերցող.
 ժ. Դռնապան.

Ե. ՊՊԱՄՆԵՐՆ ՈՒ ԱՆՕԹՆԵՐԸ

- ա. Սկիհ.
 բ. Մազգմայ.
 գ. Մասնատուփ.
 դ. Բաժակաման.
 ե. Խնկանոց, բուրգառ.
 զ. Տապանակ, խնկաման.
 է. Խաչվառ կամ վառ.
- ը. Քշոց.
 թ. Խաչ.
 ժ. Միւռնաշիշ աղաւնի.
 ժա. Կոնք, դոյլ, ղենջակ
 ժը. Պատկեր.
 ժգ. Գրակալ.
 ժդ. Աշտանակ, կերոն, մոս.

Զ. ԶԳԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ

- ա. Բնդիմանուր զգեստներ.
 Աքեմ.
 Վեղար.
 Փիլոն.
 Գաւազան – օձազարդ և հովուական.
 Մատանի.
 Հողաթափ.
- բ. Սարկաւագի, կիսասարկաւագի և դպիրների
 զգեստներ.
 Շապիկ.
 Ուրար.
 Բազկուրար.

- դ. Քահ. զգեստներ.
 Սաղաւարտ.
 Շապիկ.
 Փուրուար.
 Գօտի.
 Թաշինակ.
 Բազլան.
 Վակաս.
 Շուրջառ, նափորտ.
- դ. Եպիսկոպոսակ, զգեստներ.
 Թագ կամ խոյը.
 Արտախուրակներ.
 Եմիփորոն.
 Հայրապետական զգեստներ.
 Կոնքեռն.
 Արծուէգորդ.
 Շուրջառ, նափորտ. Ասա.

Է. ՊՐՔԵՐԸ

- ա. Աւետարան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0152406

46.	Հայոց գրականութեան պատմութիւն վ., Փաշ-	փաղեանի	1 50	
47.	Երիտասարդութեան մեղքեր, Համմոնդի, թ.	Արայ. Արայեան	1 —	
48.	Շարլ Մ. Հիլլր. զրամա, թ. վ., Փ.	Փաղեանի	— 50	
49.	Դասագիրք Ընդհ. պատմութեան, Վինօգրա-	դովի, Հին-դար, թ. Գ. Խաժակ	1 25	
50.	Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեա-	նի և Ս. Շահազիզի բանագուղծութիւնների	մէջ, Բ. Խշանեանի	1 —
51.	Կենսագրութիւն «Գուտտենբերգի»		— 40	
52.	Հայերէն գրադիտութիւն ուսուցանելու բա-	նաւոր նախապատրաստութեան մասին ու-		
	սուցիչների համար Ղ. Աղայեանի		— 10	
53.	Աղա-Նեղորի. Բանաստեղծութիւններ, թարգ.	Յ. Յակոբի համար	— 50	
54-55.	Դասընկեր, Թաշմաճեանի և Զիլինդարեանի	Ա. մաս. 40 կ. Բ. մաս.	— 50	
56-57.	Հայ գրողներ Ա. մաս, կազմ. Ահարոնեան,	Աղայեան, Թումանեան և Փափաղեան	2 —	
	Բ. մաս		2 —	
58.	Պոլէնց, Գիւղացի Բիւտնէրը. թարգմ.	Ո. Թառայեանց	1 25	
59.	Բէն Հուր, թարգ. Տիրայր վարդ.		1 —	
60.	Գ. Աւետեան. Թատրոնական գրադարան I /		1 —	
61.	Տէրն ու բանւորը, Տօլստոյի, Խան-Ազատ		20	
62.	Հայոց Պատմութիւն, մասն. ա. Խանազարի	և Վարդանեանի	— 50	
63.	Գ. Աւետեան թատրոնական գրադարան .	II 1 —		
64.	Լ. Меликsetъ-Бековъ. Родство грузинъ съ			
	испанцами		25	
65.	Դասընկեր III մ.		60	
66.	Арм. древности въ Аккерманѣ. Л. Мел.-Бекъ	—	25	
67.	Կարգ Աստուածաշտութեան Գ. Աղանեանց	ա. ք. VII ապ.	— 50	
68.	Л. Толстой. Живой трупъ		— 25	

Դիմել՝

Тифлисъ Книжный магазинъ „Гуттенбергъ“.